

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

Ռոմիկ Խ. Քոչարյան

Փիլ. գիյր. թեկնածու

Անահիտ Ռ. Զիջյան

Փիլ. գիյր. թեկնածու

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԸՍՏ ՏԵՍԱ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԻ*

Բանալի բառեր – սոցիալական գիտություն, սոցիոլոգիա, սոցիալականորեն նշանակալի, իսկություն, կարգավորություն, գորություն:

Մուտք

Սոցիալական գիտությունը տեսա-գործնական իմաստություն է՝ մարդկային ինքնության ու կյանքի՝ անձնավորյալ կենսակերպի ու ընդհանուր կենսակարգի, մշակույթի՝ ստեղծարար ու հոգածու գործունեության, առաքինակարգ կատարելագործման հնարավորությունների հոգեկեցույց ու կենարար իմաստության խորհրդիմացություն և կենագործում:

1. Սոցիալական գիտության տեսական կատարումը

Սոցիալական գիտության և կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի գոյություն ունեցող սահմանումներն առավելապես ըստ առարկայի են, այլ ոչ ըստ կատարումի, և դրանցում հիմնականում մարդկային կյանքի իրողությունների որակականորեն հնարավոր տեսականու քանակական թվարկմամբ բացորոշվում է սոցիոլոգիայի գիտական տեսա-իմացության ենթակա առարկա-

յական ոլորտը¹: Այնինչ, սոցիալական գիտությունը և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան կարելի է և նույնիսկ հարկ է սահմանել ոչ միմիայն ըստ առարկայի՝ առանձնաբար, այլև, որպես սկզբունքորեն անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյություն, այն սահմանել նաև ըստ կատարումի², նույնպես առանձնաբար, և ապա՝ ըստ առարկայի ու կատարումի՝ միասնաբար:

Ի՞նչ ասել է՝ «կատարում» և ի՞նչ է նշանակում՝ սահմանել՝ ըստ կատարումի: Դավիթ Անհաղթի ուսուցանությամբ՝ կատարումը (աստ՝ կոնկրետորեն հենց սոցիոլոգիայի կատարումը) իր բաղադրակազմում ներառում է նախ՝ դիտավորությունը, այսինքն՝ մտահայեցվող իդեան, և ապա՝ ըստ այդ դիտավորության՝ նաև կերպարանումն ու իրագործումը³:

Իսկ ինչո՞ւ է անհրաժեշտ ու նաև նախընտրելիորեն պիտոյական սոցիալական գիտությունը սահմանել ոչ միայն ըստ առարկայի, այլև ըստ կատարումի: Քանզի սոցիալական գիտության միմիայն ըստ առարկայի սահմանումը կարող է լինել ոչ լիարժեք և սկզբունքորեն ոչ կարարյալ: Ինչպես և Դավիթ Անհաղթն է սահմանման փեսությունը ներկայացնելով ուղղակիորեն հասարարում, միմիայն ըստ առարկայի կամ կատարումի բազում սահմանումներ են անկարար⁴: Այս առնչությամբ ուսանելի երկու օրինակներ է նշում Դավիթ Անհաղթը: Օրինակ՝ բժշկությունը միմիայն ըստ առարկայի սահմանելը բավական չէ այն միանշանակորեն բնորոշելու համար: Ըստ առարկայի սահմանվում է, որ բժշկությունը արվեստ է (այժմ այն կարելի է սահմանել որպես նաև գիտություն, սահմանման մեջ որպես մերձավոր սեռ անվանելով ոչ սոսկ արվեստը, այլև հենց գիտությունը, քանզի ժամանակակից բժշկությունը արդեն նաև գիտություն է՝ բժշկագիտություն – Ռ.Ք.) մարդու մարմնի վերաբերյալ: Եվ սակայն, սահիրողականը ևս արվեստ է՝ մարդու մարմնին վերաբերող, և այն բժշկություն չէ⁵: Ըստ նույն օրինակի՝ ժամանակակից բժշկությունը գիտություն է՝ մարդու մարմնին վերաբերող, և, սակայն, անարումիան ևս գիտություն է մարդու մարմնին վերաբերող, և այն ամեննին էլ բժշկություն չէ: Արդ՝ էական է բժշկությունը սահմանել առարկայի հետ մեկտեղ՝ նաև ըստ կատարումի: Բժշկությունը արվեստ (գիտություն) է՝ մարդու մարմնին ուսումնասիրող և առողջություն արարող⁶: Եվ այսպիսի սահմանումն արդեն կարարյալ է, քանզի ըստ սահմանման փեսության՝ «կարարյալ սահմանումն այն է, որ հակադարձելի է սահմանվողի նկարումանք»⁷: Ահավասիկ, բժշկության՝ ըստ առարկայի ու կատարումի միասնաբար սահմանումը հակադարձելի է ու հենց կարարյալ. այն արվեստը (գիտությունը), որն ուսումնասիրում է մարդու մարմինը և արարում առողջություն, ոչ այլ ինչ է, եթե ոչ միմիայն բժշկություն: Դավիթ Անհաղթի մյուս օրինակը վերաբերում է հոեպոթոթյանը: Հոեպոթոթյունն ար-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.12.2020:

1 Տե՛ս **Քոչարյան Ռ., Զիջյան Ա.**, Սոցիալական գիտության սահմանումը ըստ առարկայի, «Վեմ», Եր., 2018, N 3 (63), էջ 9-42:

2 Կոնկրետորեն՝ սոցիալական գիտության «կատարումի» մասին կանխասացությամբ ակնարկը տե՛ս նույն տեղը, էջ 24:

3 Տե՛ս **Դավիթ Անյաթ**, Սահմանք իմաստասիրութեան, «Երկասիրութիւնք փիլիսոփայականք», աշխատասիրությամբ **Ա. Արևշատյանի**, Եր., 1980, էջ 46:

4 Տե՛ս նույն տեղը, էջ 50:

5 Տե՛ս նույն տեղը, էջ 50:

6 Տե՛ս նույն տեղը, էջ 48, 49, 50:

7 Նույն տեղում, էջ 50-51:

վեսար է՝ հավանություն արարող: Այսպիսի սահմանումը ևս հակադարձելի չէ և ուրեմն՝ սկզբունքորեն կատարյալ չէ: Քանզի հավանություն արարողը միմիայն հռեպորություն արվեստը չէ, և որևիցե ասացյալի նկատմամբ հավանություն է արարում ու հենց համոզում ոչ միայն հռեպորությունը, այլև գրամաբանությունը⁸:

Հարկ է սոցիալական գիտությունը և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան սահմանել և նրա բնությունը բացահայտել՝ ճշգրիտ հետևելով սահմանման տեսությանը: Արդ՝ ո՞րն է սոցիոլոգիայի, ըստ իր բուն կոչման, սկզբունքային դիտավորությունն ու ամբողջական կատարումը, և ինչպիսի՞ն կարող է լինել սոցիոլոգիայի սահմանումն ըստ կատարումի: Կատարումը կարող է լինել ինչպես տեսական, այնպես էլ գործնական: Եվ նախ՝ հարկ է պարզել, թե ինչպիսի՞ն է ամենայն գիտության ու նաև կոնկրետորեն սոցիալական գիտության տեսական կատարումը: Համայն գիտության ու նաև սոցիոլոգիայի տեսական կատարումը՝ **իսկության բացահայտումն** է, որ և ժամանակակից սոցիոլոգիայում իր առավելաչափ ընդգծվածությամբ՝ պայմանավորել է նաև նրա որպիսությունը: Այս առումով ժամանակակից սոցիոլոգիայի որպիսությունը ներկայանում ու որոշարկվում է առավել իր տեսա-ձանաչողական գործությամբ ու գործառնությամբ՝ **ճշմարտության** բացահայտմամբ, քան գործնական կատարումով, այսինքն՝ **բարու**, որ և՛ բարենշանակի ու բարեկարգության, կենսագործման դիտավորությամբ և ըստ այդմ՝ կերպարանումով ու իրագործումով:

Սոցիոլոգիայի սահմանում՝ ըստ կատարումի (տեսական).

Սոցիոլոգիան գիտություն է՝ սոցիալական ու նաև սոցիալականորեն նշանակալի իրողությունների որպես այդպիսին գոյության և հենց այդ նշանակալիության իսկությունը բացահայտող:

Սոցիոլոգիայի սահմանումը՝ ըստ կատարումի (նույնպես տեսական) կարող է լինել նաև այլ ձևակերպմամբ՝ «սոցիալականորեն նշանակալի իրողություններ» հասկացության փոխարեն գործածելով ուսումնասիրության տիրույթի առավել լայն ընդգրկում իրենում ներառող՝ «մշակութային նշանակալի իրողություններ» հասկացությունը, քանզի «մարդկային կամ մարդկության կյանքի» համաբովանդակությունում «սոցիալականը» ևս «մշակույթ» է ու կոնկրետորեն՝ «կենսամշակույթ», և ներընդգրկվում է «մշակութային նշանակալի» առարկայական տիրույթի բաղադրակազմում:

Սոցիոլոգիան գիտություն է՝ մշակութային նշանակալի իրողությունների որպես այդպիսին գոյության և հենց այդ նշանակալիության իսկությունը բացահայտող:

Նկատենք, որ այս սահմանումները ևս ոչ միայն ըստ տեսական կատարումի են, այլև ըստ առարկայի, քանզի դրանցում բացորոշվում է նաև ուսումնասիրության ենթակա ոլորտը՝ որպես «սոցիալական», «մշակութային»

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 51:

նշանակալի» իրողություններ: Սոցիոլոգիայի՝ ըստ կատարումի սահմանման մեջ, նրա **դիտավորությունը**, ըստ այդմ՝ նրա ինքնության ներքին **կերպարանումը** կամ ինքնապատրաստությունը՝ և՛ տեսական, և՛ էմպիրիկ առումներով (այն է՝ հայեցակարգային, մեթոդաբանական, ռեսուրսային, էմպիրիկ տվյալների ձեռքբերման ու մշակման տեխնիկաների), ապա և՛ այդպիսի որպիսությանը իր առջև դրված խնդրի **իրագործումը** բացորոշվում է որպես **մշակութային նշանակալի իրողությունների որպես այդպիսին գոյության իսկության բացահայտում**:

Սոցիալական գիտության և կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի անհրաժեշտ ու նախընտրելի գոյության իսկությունը հայտող իմաստի ու իմաստության խորհուրդի հասկացմանն ու մեկնաբանությանը նվիրված այս խորագրում, այսպիսով, առանձին-առանձին ներկայացվեցին սոցիոլոգիայի սահմանումներ և՛ ըստ առարկայի, և՛ ըստ տեսական կատարումի: Կանխասացությամբ ակնարկվեց և արդ՝ կարելի է հաստատագրել, որ բոլոր այդ սահմանումները՝ և՛ ըստ առարկայի, և՛ ըստ տեսական կատարումի, սոցիոլոգիայի դեռ միայն **տեսական** գործությանը (պոտենցիային) կամ բաղադրիչին են վերաբերում: Սոցիոլոգիան ուսումնասիրելով բուն «սոցիալական» ու նաև «սոցիալականորեն նշանակալի» իրողությունների գոյությունը և բացահայտելով իսկությունը, գոյություն ունի, մնում և կատարելագործվում է դեռ միայն գուտ **տեսա-ճանաչողական** իր կոչումի ու գործառնության մեջ: Ընդ որում, սկզբունքորեն ամենայն գիտության և այդ թվում նաև սոցիալական գիտության ու հենց սոցիոլոգիայի **քննա-խորհրդածության ու մեկնորոշման «ինչպեսը» միմիայն միջոց է՝ ենթակարգված ու նպատակամետ «ինչը» հայտորոշելու հիմնա-, առանցքա- ու վերջնախնդրի կատարումին**⁹:

Իսկ ինչպիսի՞ն կարող էր լինել սոցիոլոգիայի գոյության **գործնական** բաղադրիչի սահմանումը, որում և բացորոշված կլինեք սոցիոլոգիայի ոչ թե գուտ տեսական, այլև արդեն գործնական մոդուսով գոյության ու գործառնության իմաստը, այսինքն՝ սոցիոլոգիայի գոյության նախակոչվածության ու բուն պոտենցիայի և, ըստ մարդկային կարողության, իմանալի կոչումի ու հենց գործառնության իմաստը: **Սոցիոլոգիայի գործնական գոյությունն ու հենց բաղադրիչը բարեկարգության հնարավորությունը հայտող իմաստի ու իմաստության խորհուրդի հասկացումն ու իրագործումն է:** Եվ այդ կնշանակի, որ սոցիալական գիտության ու կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի գործնական բաղադրիչում նույնպես առաջնահերթ է տեսա-ճանաչողականը, ասինքն՝ բարու ու հենց բարեկարգության հնարավորությունը հայտնացուցող

9 Սոցի այս ունիվերսալ բանաձևը՝ կոնկրետորեն նաև :ատմության նկատմամբ կիրառությամբ տեսն **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինսիփս», Եր., 2016, էջ 387:

իմաստի ու իմաստության խորհուրդի նախ՝ հասկացումն ու մեկնորոշումը և ապա միայն՝ կենսագործումը:

Աստ՝ սոցիոլոգիայի կատարումի ոչ սոսկ տեսական, այլև գործնական բաղադրիչի դեռևս միայն տեսա-իմացական մասը նկատի ունենալով՝ այն կարելի է սահմանել՝ ըստ առարկայի ու տեսա-գործնական կատարումի (դեռ միայն տեսա-իմացական):

Սոցիոլոգիան գիտություն է՝ մշակութորեն նշանակալի իրողությունների որպես այդպիսին գոյության մեջ բարեկարգության հնարավորությունը հայտող իմաստը, որում և՛ իմաստության խորհուրդը, բացահայտող:

«Իմաստության հերմենևտիկայի»¹⁰ հայեցակարգով ու մեթոդաբանությամբ իրականացվող այս քննա-խորհրդածության արդյունքում **սոցիոլոգիայի** ամբողջական բնությունը բացահայտող սահմանումը՝ ըստ առարկայի և տեսա-գործնական կատարումի (նույնպես դեռ միայն տեսական), կարելի է ամրագրել հետևյալ կերպ.

Սոցիոլոգիան գիտություն է՝ մշակութորեն նշանակալի իրողությունների որպես այդպիսին գոյության իսկությունը և բարեկարգության միտող ու հաստող իմաստը, որում և՛ իմաստության խորհուրդը, բացահայտող ¹¹:

Ասվեց, որ բացահայտել ամենայն գոյի և այդ թվում՝ մարդկային կյանքի իրողությունների որպիսություն, կնշանակի՝ բացահայտել այդ ամենի իսկություն: Եվ մեկնորոշվեց, որ բազում գիտությունների ու կոնկրետորեն՝ սոցիալական գիտության կատարումը տեսա-գործնական երկմիասնությամբ է կայանում, որում և առաջնահերթային՝ տեսա-իմացական կատարումն իրագործվում է որպես ամենայն գոյի և աստ՝ մարդկային կյանքի էական իրողությունների իսկության բացորոշում: Իսկ ինչպիսի՞ն է «իսկության» բաղադրակազմը, և որո՞նք են «իսկության» բաղադրիչները, որոնց հայտորոշումն էլ կարող է լիիրավ ներկայանալ հենց «որպիսության» բացահայտում:

Այս հարցադրության առնչությամբ կարևոր է վերհիշել սոցիալական գիտության՝ Մ. Վեբերի սահմանումը. **սոցիալական գիտությունը (այստեղ**

10 Տե՛ս **Քոչարյան Ռ.**, «Իմաստության հերմենևտիկան»՝ ամենայն գիտության և փիլիսոփայության հիմնորոշ ու համընդհանուր մեթոդաբանական հայեցակարգ, «Արդիականության մարտահրավերները. փիլիսոփայական և հոգեբանական հիմնախնդիրներ», միջազգային գիտաժողով, ԵՊՀ հրատ., Եր., 2014, էջ 18-21: Այս հայեցակարգի ու մեթոդաբանության ու նաև կոնկրետորեն պատմության նկատմամբ կիրառության մասին մանրամասնորեն տե՛ս նաև **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինգտոն», Եր., 2016:

11 Կարելի էր, իհարկե, և թվում է, թե ավելի բարեհունչ կարող էր լինել՝ սահմանման բանաձևը ձևակերպել փոքրինչ այլ կերպ՝ **սոցիոլոգիան գիտություն է՝ մշակութորեն նշանակալի իրողությունների որպես այդպիսին գոյության իսկության և բարեկարգության հնարավորություն հայտող իմաստի բացահայտման**, սակայն, այդպիսի սահմանումը «բացահայտող» բառի «-ող» վերջավորությամբ արտահայտվող սոցիոլոգիայի առանձնահատկությունը փոխարինելով սոսկ դիտավորություն, նպատակ արտահայտող «բացահայտման» բառի «-ման» վերջավորությամբ, կլիներ սահմանում ըստ առարկայի ու ըստ դիտավորության, այլ ոչ ըստ կատարումի, որում հարկ է ներկայ լինեն և դիտավորությունը, և՛ կերպարանումը, և՛ իրագործումը: Այնինչ, վերոբերյալ սահմանումը միասնաբար ըստ առարկայի ու կատարումի է, որում միախուսորեն ներկա են դիտավորությունը, կերպարանում-ինքնապատրաստումն ու իրագործումը:

նույնն է, թե ասել՝ սոցիոլոգիան) գիտություն է իրականության մասին և ձգտում է հասկանալ մեզ շրջապատող իրական կյանքն իր յուրակերպության մեջ՝ նրա առանձին երևույթների, իրենց այժմյան կերպի մեջ, փոխկապակցությունն ու մշակութային նշանակալիությունը, ինչպես նաև դրանց հենց այդպես, այլ ոչ այլ կերպ պատմականորեն կայացման պատճառները¹²:

Վերերյան այսկերպ սահմանման մեջ սոցիալական գիտության ուսումնասիրության առարկա է ներկայանում մարդկային իրական յուրակերպ կյանքը՝ իրեն բաղկացնող երևույթների փոխազդեցությունը որպես այդպիսին կայացման պատճառներով, փոխկապակցվածությամբ ու մշակութային նշանակալիությամբ: Կարելի է նաև նկատել, որ սահմանման մեջ մանրակրկիտ հայտորոշելով սոցիալական գիտության առարկան՝ մարդկային իրական յուրակերպ կյանքն իր բաղադրակազմ երևույթների որպես այդպիսին կայացման, փոխկապակցվածության ու մշակութային նշանակալիության ուսումնասիրության սկզբունքային անհրաժեշտությամբ, արդեն իսկ նկատի է առնվում **ուսումնասիրության մեթոդի աղեկվարությունն իր առարկային:** Ըստ այդմ՝ մեթոդն ու խնդրակարգը հարկ է լինեն այնպիսին, որ բացահայտվի **առարկայի հենց որպես այդպիսին կայացումը**, ինչը հնարավոր է, եթե իրողությունն ուսումնասիրվում է «ներսից» ու բացահայտվում իսկությունը, այլ ոչ թե քննության առնվում իրողության որպիսությունից ու բուն իսկությունից արտաքո՝ այլապես պրագմատիկաներով առաջնորդվող հետաքրքրության ու «շահ»ախնդրության կանխորոշ դիտարկյուններով: Ուսումնասիրության մեթոդը «խնդրոտ նյութ» առարկան պետք է մտաքննի «ներսից» նաև հենց **իրողության բուն որպիսության՝ «մշակութորեն նշանակալիության»** բացահայտման համար: Մեթոդը դարձյալ հարկ է լինի մարդկային կյանքը հենց «ներսից» ուսումնասիրությամբ մտաքննող, քանզի նպատակամետ է նաև բացահայտել **այլ իրողությունների հետ փոխկապակցվածությունները**, որոնցով ևս պայմանավորված՝ կայացել է իրողությունը որպես հենց այդպիսին: Եվ Մ. Վերերը սոցիալական գիտության համար որպես այդպիսի համընդհանուր ու հենց սեփական՝ իր առարկային աղեկվար, մեթոդ է դիտարկում «հասկացումը», ըստ որի և՛ կյանքի կոչում «հասկացողական սոցիոլոգիայի» իր հանրահայտ հայեցակարգը¹³, հերմենևտիկայի էականորեն նշանակալի, սկզբունքորեն անհրաժեշտ ու նախընտրելի ներկայությունը հասարակագրելով սոցիալական գիտությունում ու կոնկրետորեն՝ սոցիոլոգիայում:

Ամենայն գիտություն և, ըստ Մ. Վերերի վերոբերյալ սահմանման, կոնկրետորեն նաև սոցիալական գիտությունը սկզբունքորեն դիտավորություն ունենալով բացահայտել ուսումնասիրվող առարկայի որպիսությունը, չի բավարարվում մարդկային կյանքի իրողությունների՝ այս աշխարհում իրագործված (ակտուալացած) կերպը, նկարագրական ու հենց արտաքին բնութագրերը հայտորոշելով, այլ՝ բացահայտում է այդ իրողությունների բուն **պատճառը** և հենց որպես այդպիսին կայացման **կարգավորությունը:** Նրա

12 Տե՛ս **Вебер М.**, Объективность социального познания, «Избранные произведения», М, 1990, էջ 369:

13 Տե՛ս **Вебер М.**, О некоторых категориях понимающей социологии, «Избранные произведения», М., 1990, էջ 495-546: Տե՛ս նաև **Джиджян А. Р., Кочарян Р. Х.**, Понимающая методология социальных наук М. Вебера, «Փիլիսոփայությունը Հայաստանում 21-րդ դարի շեմին», Եր., 1998, էջ 58-64:

այդ սահմանումից կարելի է նկատել, որ իրերի որպես այդպիսին կայացնող «պատճառը» գիտական ուսումնասիրության խնդիրներում ներկայանում է երկբաղադրյալ միասնությամբ՝ և՛ իր հիմնորոշ ներգործունակությամբ ներազդելով ու հենց ներգործաբար էացնելով «իրաց և գործոց» որակական որպիսությունը, և՛ իրենով իսկ առաջացող ամենայն իրա-, գործա- ու հենց կենսա-կապակցվածությունը կայացնելով «իրաց և գործոց» որպես այդպիսին լինելության ընթացքի կարգավորություն: Հիրավի, մարդկային կյանքի իրողությունների՝ իրենց կայացման փոխներգործուն ու փոխկապակցվող դինամիկայում ուսումնասիրությունը հայտորոշում է, որ պատճառը, ըստ իր ներգործունության, կենագործում է և՛ դրանց «ի՞նչ» լինելը, այսինքն՝ որպիսությունը, և՛ «պատճառ-հետևանքային» կապակցվածության բացահայտմամբ՝ դրանց «ինչպես» լինելը, այսինքն՝ հենց այդ որպիսությամբ կայացման կարգավորությունը: Արդ՝ Մ. Վեբերի սահմանումից ուսյալ՝ կարելի է կարճառոտ վերաձևակերպմամբ ամրագրել սոցիալական գիտության ու կոնկրետորեն սոցիոլոգիայի սահմանումներ՝ ըստ կատարումի (տեսական)։

Սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային կյանքի իրողությունների՝ պատճառով հանդերձ որպիսությունը ուսումնասիրող ու բացահայտող:

Սոցիալական գիտությունը և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան կարելի է սահմանել՝ ըստ կատարումի, մարդկային ինքնության, կյանքի ու մշակույթի որպես այդպիսին կայացմանը, որում և՛ անհրաժեշտ ու նախընտրելի ներկատարելագործմանը, նպատակամետ իրենց որպիսությունը հայտնացուցող մտքի հետևյալ բանաձևով ևս. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային ինքնությունն ու համաբովանդակ կյանքը որպես այդպիսին կայացնող ու կատարելագործող մշակույթներն նշանակալի իրադարձությունների ու գործերի որպես այդպիսին՝ «ի՞նչ», «ինչպիսի՞ ինչ» ու «ինչի՞ համար»** (որակական որպիսությունը հայտող ներքին գորությունը՝ այդ որպիսությունն էացնող-բաղկացնող առանձնահատկություններն ու նաև նշանակալիությունը) **և «ինչպե՞ս» գոյությունը** (պատճառը, կարգավորությունն ու գոյության կերպը) **բացահայտող**¹⁴:

Ահավասիկ, սոցիալական գիտությունում ուսումնասիրել ու բացահայտել իրողության որպիսությունը, կնշանակի՝ բացահայտել իրադարձությունների ու մարդկային գործերի որպես այդպիսին գոյացնող ներքին «գորությունը» և «կարգավորությունը»: Նկատելի է, որ Մ. Վեբերի՝ սոցիալական գիտության վերորբերյալ սահմանման մեջ ներկայացվում է ուսումնասիրության խնդրակարգի մի ըմբռնում, որում որոշակիորեն պահպանվում է գիտության արիստոտելյան ըմբռնման առանձնահատկությունը: Դեռ անտիկ շրջանում գի-

14 Մտքի այս բանաձևը նույնորեն ճշտիմաց պատմության նկատմամբ իր կիրարկումով տես **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինսիփս», Եր., 2016, էջ 532:

տության՝ իր ուսումնասիրության ենթակա գոյի նկատմամբ բուն «անելիքի» արհեստողորմական ըմբռնման տեսադաշտում՝ ձանաչել «իրաց և գործոց» էությունը, նշանակում էր դրա «իրագործվածության» հետ մեկտեղ՝ ձանաչել նաև ներքինը՝ «պոտենցիան» ու հենց «գորությունը», որը նույնպես գոյություն ունի մարդկային կյանքի ամենայն այդ իրողություններում:

Կարելի է ամրագրել, որ ամենայն գիտություն հետամուտ է «իրաց և գործոց» որպես այդպիսին և ուրեմն՝ որակական այդ որպիսությամբ կայացնող ներքին ու խորքային հիմքերի՝ բուն էության ու հենց էութենական «գորության», ինչպես նաև հենց որպես այդպիսին գոյացման ընթացքի «կարգավորության» ուսումնասիրությանը¹⁵: Եվ նույնորեն նաև հենց սոցիալական գիտության գոյության էական ու հիմնարար **խնդրակարգն է՝** քննա-խորհրդածությամբ հասկանալ ու մեկնորոշել մարդկային համատեղ կյանքը **բարենշանակորեն էացնող և այդկերպ՝ էական** իրողությունների որպես այդպիսին գոյության **«գորությունն» ու «կարգավորությունը»:**

Հիրավի, մարդկային կյանքի իսկությունը, որին և կոչված ու սկզբունքորեն նպատակամետ է ուսումնասիրել ու քննա-խորհրդածությամբ հասկանալ ու մեկնորոշել ամենայն սոցիալական գիտություն, **բազմաբովանդակ է:** Սոցիալական գիտության և կոնկրետորեն՝ սոցիալական իմաստասիրության, սոցիոլոգիայի ու սոցիալական աշխատանքի (սատարագիտության) խորհրդածությունների ու գնահատականների միահյուսությամբ, որոնցով և՛ մեկնորոշյալ իմաստի ու իմաստության խորհուրդի բազմաբովանդակությամբ ու մեկմիասնականությամբ՝ ներկայացվում է **մարդկային կյանքի էական իրողությունների որպիսության բազմաբովանդակ և նույնիսկ ներկարգավոր փոխկապակցվածությամբ՝ համաբովանդակ իսկությունը, այն է՝**

ա) գոյակից ու նշանակալիորեն պայմանավորող հանգամանքները,
բ) անցյալի եղելության, ներկայի լինելության և ապա՝ անցյալի ու ներկայի ուսումնասիրությանը հիմնացյալ գիտական կանխատեսումով՝ նաև ապագայի լինելիության կարգավորությունը,

գ) մարդկային կյանքի իրողությունները որպես այդպիսին կայացնող գորությունը՝ մարդկային ստեղծում, հոգուն ու կյանքին իր ներգործուն ազդեցիկությամբ: Եվ ինչպես արդեն ասվեց, ամենայն գիտության և կոնկրետորեն նաև սոցիալական գիտության քննա-խորհրդածության ու մեկնորոշման «ինչպես»-ի ներկազմակերպումը սկզբունքորեն ենթակարգված է հենց «ինչ» ասելիքին և ուրեմն՝ իրողության բուն իսկությունը, որում և՛ «գորությունն» ու «կարգը»՝ պատճառով հանդերձ, հայտող իմաստն ու իմաստությամբ:

¹⁵ «Զորություն» և «կարգավորություն» հասկացությունների մանրամասն բացորոշումը տես **Քոչարյան Ռ.**, Պատմության մեկնողականությունը և Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, մաս առաջին. Պատմությունը ժամանակահոս կյանքի անցյալի նշանակալի ներկայություն, «ՎԷՆ», N 1(53), Եր., 2016, էջ 122-124: Տես նաև **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 117-118: Տես նաև **Քոչարյան Ռ.**, Կրթություն և Հերմենևտիկա. Կրթություն առ իմաստություն, «Եվրոպրինտ», Եր., 2018, էջ 53-

յան խորհուրդն իր նշանակալիությամբ բացորոշելու նպատակային հիմնախնդրին:

Սոցալական գիտությունում ու կոնկրետորեն՝ «սոցիալական իմաստասիրությունում» և արդ՝ նաև «իմաստության սոցիոլոգիայում» հասկացվում ու մեկնաբանվում և այս կյանքի ներկայությունում հենց **ներկայակից** են դառնում մարդկային, որում և՛ ազգային, ինքնության ու կենսակերպի **բարեկարգության (ի բարին կարգավորության) առումով էականորեն նշանակալի** իմաստության ու ամենայն առաքինության գործերի գոյության **գորությունը՝** «ի՞նչ է», «ինչպիսի՞ ինչ է», «ի՞նչ պատճառով ու ինչի՞ համար է», և **լինելության կարգը և-կամ կարգավորությունը՝** դրանց գոյության «ինչպե՞սը», իմաստության ուսումնասիրության կոչելով մարդկանց՝ ժամանակակիցներին ու հետագա սերունդներին:

«Զորությունը» ամենայն «փրաց և գործոց» լինելիության ամբողջական պրենցիպում պարունակվող փարսպեսակ որակային առանձնահատկություններով կայացման հնարավորությունների շարքում այն գերակայող բաղադրափարս է, որ և իրադարձությունը կամ մարդկային գործը կայացնում ու իմանալի է դարձնում որպես այդպիսին՝ իրենց հենց այդ կոնկրետ որակական որպիսությամբ: Եվ կարելի է հասկանալ ու ամրագրել, որ «զորություն»-ը իրադարձությունների ու գործերի ոչ միայն ներքին այն հնարավորությունն ու հենց գերակշռող կարողությունն է, որ և կայացնում է դրանց որպես այդպիսին փյվյալ կոնկրետ ներկայում: Ասելով՝ «զորություն», հարկավոր է հասկանալ մի բաղադրիչ ևս: Ի հավելում «զորության» առնչությամբ վերոասացյալին, հարկ է նաև նկարի ունենալ, որ բացահայտել իրողությունների «զորությունը», կնշանակի՝ մեկնորոշել նաև դրանց **նշանակալիությունը:** Սոցիալական գիտությունն իր ուսումնասիրության մեջ պարզում է և՛ «փրաց ու գործոց» ներկա որպիսությունը որպես «արյաքին» կայացնող «ներքինը»՝ որպես «զորություն», և՛ թե ի՞նչ ազդեցություն, ներգործություն է դրսևորում այդ իրադարձությունը կամ գործը քննության ենթակա մարդկային կյանքի առավել ընդգրկուն համարեքսպում, ինչը նույնպես ըմբռնվում է որպես իրողության «զորություն», և այս դեպքում գործ ունենք արդեն «մասի ու ամբողջի» հարաբերության հետ, որ և կոչվում է մասի նշանակալիություն ամբողջի նկատմամբ: Այսպիսով, իրադարձությունների ու գործերի «զորությունը» հասկացվում ու մեկնորոշվում է երկբաղադրյալ իր բովանդակությամբ: **«Զորությունն» այն է, ինչը իրենով կայացնում է իրողությունների որպես «ինչ» գոյությունն ու մարդկային կյանքի ամբողջությունում նշանակալիությունը:** Բացահայտել «փրաց և գործոց» զորությունը, կնշանակի՝ պարասիսանել այն հարցերին, թե «ի՞նչ է» և «ինչպիսի՞ ինչ է» և «ինչի՞ համար է» ուսումնասիրվող իրողությունը:

Իսկ «կարգը» կամ «կարգավորությունը ամենայն գոյի, որում նաև մարդկային կյանքի իրողությունների, որպես այդպիսին կայացման ու նաև արդեն կայուն որակով գոյության «ինչպես»-ն է: Իրենց այդ դիպավորությունն իրականացնելու համար հասկացումն ու մեկնաբանությունը պետք է բացահայտեն, թե իրադարձություններն ու գործերը իրենց «ինչպես» կայացման ընթացքով՝ կարգավորությամբ, են եղելականացել այնպիսին, ինչպիսին որ կան ուսումնասիրության փյվյալ պահի ներկայում: Եվ հարկ է ասել, որ մարդկային կյանքի ամենայն իրողությունների որպես այդ-

պիսին կայացման կարգավորությունը չի դրսևորվում միայն «պարճառա-հերկանքա-յին» կապակցվածությամբ, ինչն առավելապես հայրուկ է բնությանը, այլ ունի իր դրսևորման բազմալ հնարավորություններ: Ըստ «կյանքի փիլիսոփայության» ակադեմիական ուղղությունը ներկայացնող գերմանացի հայրնի փիլիսոփա, մշակույթի պարունաբան և «ոգու մասին գիտությունների» մեթոդաբանական իր խորհրդածոյություններում՝ նաև փիլիսոփայական հերմենևտիկայի փեսաբան Վ. Դիլթայի (1833-1911 թթ.), մարդկային կյանքի իրողությունների կայացման «կարգավորությունը» կարող է լինել և ուսումնասիրությամբ բացահայտվել զանազանակերպ կապակցվածությամբ՝ «հերկանքի ու պարճառի», «արդյունքի ու ազդեցության», «արտահայտության ու դրանում արտահայտվողի», «արտաքինի ու ներքինի»¹⁶:

Սոցիալական գիտության կոչումն ու իսկությունը մարդկային կյանքի ու նաև ամենայն սոցիալական ու սոցիոլոգիական հայեցակարգերում իմացա-հայտ՝ անցյալի եղելությունների կամ ժամանակակից իրողությունների ու նաև լինելիության հնարավորության կանխատեսման երբեմն մասնաչափ կենսագործված **իսկությունները**, որոնց հետ միատեղ՝ ամենայն՝ նախկին ու ժամանակակից, այդ սոցիալական տեսությունների՝ մարդկային կյանքի պո-տենցիայի և-կամ հենց գործության հետ բաղդատմամբ իմանալի՝ **իսկության մասնաչափությունը արդեն նաև անհրաժեշտ ու նախընտրելի լրումի կատարելության բերող բարենշանակ ու նախընտրելի իմաստության խորհուրդների բացահայտությունն է:**

Ըստ այդմ՝ կարելի է ամրագրել սոցիոլոգիայի՝ ըստ առարկայի ու կա-տարումի (տեսական) սահմանումներ. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդ-կային ինքնության ու կյանքի մշակութային նշանակալի՝ անցյալ եղելու-թյունը, ներկա իրողությունն ու հետագա լինելիության որպիսության հնարավորությունը՝ պատճառով հանդերձ, կայացնող ու հայտող գորու-թյունն ու կարգավորությունը և այդկերպ՝ իսկությունը բացահայտող, ըստ մարդկային կարողության:**

Աստ՝ սահմանման բանաձևում ասելով՝ «մշակութային նշանակալի», անշուշտ, այդ հասկացության բովանդակությունում նկատի է առնվում՝ «սո-ցիալականորեն, կրթականորեն, տնտեսականորեն, քաղաքականորեն..., միով բանիվ՝ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալին»: «Այն ամենը, ինչը որպես մարդկային բազմաբովանդակ կյանքի ատրիբուտներ նշում ենք աս-ելով՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական, իրավական, ... և մեկնո-րոշելով՝ ի մի բերում ու կոչում՝ մշակութային, միով բանիվ՝ կարելի է նաև կոչել **քաղաքակրթական»**¹⁷: Ընդ որում, մարդկային այստեսակ բազմաբո-վանդակ գործունեության ամենայն ուղղություններում գերակայում է **հոգ-ևոր** բաղադրիչը՝ որոշակի գաղափարաբանությունը՝ հիմնորոշ իդեա(ներն)

16 **Թոչայան Ռ. Խ.**, «Բաց հերմենևտիկայի» խնդրակարգը և Վ. Դիլթայի հերմենևտիկայի հայեցակարգը, «ՎԷՆ», N 1(49), Եր., 2015, էջ 32:

17 **Թոչայան Ռ., Ջիլյան Ա.**, Սոցիալական գիտության սահմանումը՝ ըստ առարկայի, «ՎԷՆ», N 3 (63), Եր., 2018, էջ 37:

ու նաև դրա(նց) վերաբերյալ տեսաբանությունը: Արդ՝ բանաձևյալ սահմանումները «կարելի է նույնիսկ ձշգրտել՝ սոցիալական գիտության ու կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկայական տիրույթը նշելով առավելաչափ համընդգրկուն հասկացությամբ և որպես այդպիսին նկատի ունենալով՝ «հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի իրողությունները»¹⁸: Քանզի մարդկային բազմատեսակ՝ հոգևոր-բարոյական, կրթական, գիտամշակութային, սոցիալական, տնտեսական, քաղաքական... գործունեության հնարավորություններն իրենցով միաբերվող համարվանդակությամբ ներկայանում են որպես հենց «հոգևոր-քաղաքակրթական»¹⁹: Այս առումով՝ սոցիալական գիտության բնությունը բացահայտող սահմանման մեջ նրա ուսումնասիրության ու գործառնության առարկան նշող բանաձևում կարելի այդկերպ ձշգրտմամբ հաստատագրել՝ «մարդկային **հոգևոր-քաղաքակրթական** ինքնությունը, կյանքն ու մշակույթը» և-կամ «մարդկային ինքնությունը, կյանքն ու մշակույթը որպես այդպիսին կայացնող ու բաղկացնող **հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի** իրողությունները»:

Սոցիալական գիտությունը, ըստ իր կոչման ու ըստ այդմ՝ իսկության, մարդկային ինքնության, համակեցության ու մշակույթի բարենշանակ եղելումի ու լինելիության՝ հասկացման ձգտող ժամանակակիցներին ու սերունդներին հղված և ամենքին այժմեական, ներքինում ու արտաքինում՝ ինքնությունում ու կենսակերպում, տեսականին ու գործնականին՝ իմացությանն ու անելիքին **ներկայակցության** կոչված իսկության ու իմաստության խորհուրդների բացահայտություն է²⁰: Եվ կարելի է նկատել, որ սոցիալական գիտության կողմնորոշման ընդգծումը դեպի **մարդկային համատեղ կյանքի բարենշանակորեն էական իրողությունների** ուսումնասիրությանը, այլ ոչ նաև դեպի չարանշանակն ու կործանարարը, ամենևին էլ չի պակասեցնում ու թերի դարձնում նրա տեսա-գործնական գործառնությունների կատարումը՝ տեսական գիտելիքն ու այս կյանքում կենսագործման արժանի նրա գործնական անելիքը: Ինչո՞ւ և ինչպե՞ս: Սոցիալական գիտությունն ուսումնասիրելով մարդկային ինքնությանը, կյանքին ու մշակույթին **բարենշանակորեն ուղենպաստն ու գոյացնողը**, անշուշտ, այդ ամենի՝ առ իմաստություն և ամենայն առաքինությունն ու բարեկարգությունն ներկատարելագործմանը նպաստավոր ու չվտանգող **չափավորությամբ** և ոչ ամենևին արատավոր ու չափազանց, մարդկային ինքնությունն ու կյանքը հոգեապանության ու կենսակործանության և այդկերպ իսկ՝ չարության ներկրթող մոլությամբ, իմացահայտում է իր համար նպատակային բարենշանակի համե-

18 **Քոչարյան Ռ.**, Կրթություն և Հերմենևտիկա. Կրթություն առ իմաստություն, «Եվրոպրինտ», Եր., 2018, էջ 78-79:

19 Տե՛ս նույն տեղը, էջ 79:

20 Ասացյալն իմացահայտում է նաև «պատմության» անհրաժեշտ ու նախընտրելի գոյության ստույգ իմաստ ու իմաստության խորհուրդ, հմմտ. **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Մովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 489:

մատուցամբ՝ նաև **անբարենշանակորեն խեղաթյուրող ու կազմալուծող կործանարարն ու ոչնչարարը**: Եվ այդկերպ՝ սոցիալական գիտությունը իմացահայտում ու հենց գիտենում է մարդկային այս կյանքի իրողություններին՝ իրենց բուն կոչմանը համապատասխան իսկությամբ ու նաև անիսկությամբ, ուղղությամբ ու թյուրությամբ միասնախառն իրական որպիսությունը, և, սակայն, **սկզբունքային ու առանցքային դիտավորությունն ու ըստ այդմ՝ կերպարանում ու կատարում ունենում՝ հասկանալ, մեկնորոշել ու կենագործել առ իմաստությունն ու բարին ներկատարելագործող անհրաժեշտն ու նախընտրելին**:

Արդ՝ ամրագրվեց, որ սոցիալական գիտությունը հասկանում ու մեկնորոշում է մարդկային կյանքի էական ու հենց մշակութորեն, որում նաև սոցիալականորեն..., միով բանիվ՝ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի եղելումի՝ պատճառով հանդերձ որպիսությունը նույնորոշող գործությունն ու կարգը (կարգավորությունը): Ընդամին, էական է նաև հաստատագրել, որ այդկերպ հայտորոշելով իր առարկան ու տեսական կատարումը, **սոցիալական գիտությունը սկզբունքային դիտավորություն, կերպարանում ու կատարում ունի՝ հասկանալ ու մեկնորոշել ուսումնասիրվող «անցյալից» կամ՝ «ներկայից» կամ՝ առկայում հնարավոր ու կանխատեսելի «ապագայից» առավել մշակութային և ուրեմն՝ առավել կայարարելությամբ բարի ու իմաստուն մարդկային ինքնությանն ու կյանքի հասանելու և այդկերպ՝ նոր ու նորոգ ինքնաստեղծության և հոգևոր կենարարության պոտենցիա ունեցող հնարավորություն**: Քանզի սոցիալական գիտությունը չի ներկայանում որպես իր առարկային՝ մարդկային կյանքին, սառնորեն ու ամենևին **չեզոք** իմացակարգ: Ընդհակառակը, սոցիալական գիտությունն իր առարկայի նկատմամբ ունի **ոչ որևէ կերպ ու չափ անտարբեր, այլ հենց ջերմ հետաքրքրվածություն, աստվածասիրությանն ու մարդասիրության վրա հիմնացյալ հոգեհարազատ մերձավորություն**: Եվ որպես այդպիսին՝ սոցիալական գիտությունը նպատակամետ է ամենայն եղելություններից կամ իրողություններից ու նաև լինելիության հնարավորություններից բացահայտել մարդկային կյանքի իսկությունը հայտող այնպիսի իմաստներ, որոնցում ներկա է որոշակի **հոգևոր** լիցք, որով միայն այդ իմաստն արտահայտում է բուն կատարվածի ու նաև ներկա ու հետագա «անելիքի» հոգեկեցույց ու կենարար գործությունը: Հարկ է հասկանալ, որ սոցիալական գիտության գոյության բուն կոչումը և ըստ այդմ՝ դիտավորության, կերպարանումի ու կատարումի իսկությունը, իմաստն ու խորհրդիմացությունն է՝ ուսումնասիրել մարդկային կյանքն ու դրանում բովանդակյալ **հոգևոր ավանդը՝ իմաստն ու խորհուրդը**, և իր հասկացող ու մեկնորոշող քննա-խորհրդածության միջնորդավորմամբ՝ բացահայտել այն որպես իսկություն և հենց ներկայակից դարձնել մարդկային ինքնության, կյանքի ու

մշակույթի անհրաժեշտ ու նախընտրելի կայացման այժմեական ու հեռանկարային հնարավորությունների որոնումներում և այդպիսով **գործունացնել և-կամ ստեղծել նոր հնարավորություններ մարդկային կյանքի՝ առ բարեկարգություն կատարումի:**

Ի մի բերելով վերոասացյալը՝ կարելի է բանաձևել սոցիոլոգիայի նաև մեկ այլ սահմանում՝ ըստ առարկայի ու կատարումի (տեսական)։

Սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության, կենսակերպի ու մշակույթի նախկին եղելության, ներկա լինելության և ապագայում հնարավոր լինելիության միտումների, ինչպես նաև ներկայում ու ապագայում՝ առ բարեկերտություն ու հենց բարեկարգություն անհրաժեշտ ու նախընտրելի «անելիքի»՝ պատճառներով հանդերձ, գործությունն ու կարգավորությունը և այսու՝ բովանդակ խկությունը հայտող իմաստությունը հասկացող և մեկնողաբար բացորոշող, ըստ մարդկային կարողության:

2. Սոցիալական գիտության գործնական կատարումը

Սոցիոլոգիայի՝ ըստ առարկայի ու կատարումի վերոբերյալ բոլոր սահմանումներում որպես իսկության բաղադրատարրեր՝ «գործության» ու «կարգավորության» բացահայտմամբ և-կամ իսկության ու նաև բարեկարգության միտող ու հաստող (ստեղծող, հիմնող) իմաստի բացահայտմամբ, սոցիոլոգիայի բնությունը բացահայտվում է առավելապես տեսական-ձանաչողական, քան արդեն նաև կենսա-գործնական իր իսկության ու գործառնության գերակայությամբ: Քանզի երբ բացահայտում է և՛ տեսականը՝ ձճմարտությունը, և՛ գործնականը՝ բարին (բարեկարգության միտող ու հաստող իմաստը), այն դեռ միայն ձանաչում, հասկանում ու մեկնողաբար բացահայտում է բարին, այլ ոչ թե գործում՝ ուղղակիորեն ու գործնականում աջակցելով նույն այդ բարին ներանձնել մարդկային ինքնություններում ու կենսակերպել նրանց կեցողությունում ու գոյակցությունում: Սոցիոլոգիայի աջակցողական մասնակցությունը բարին գործելու մեջ, ըստ էության, սահմանափակվում է սոսկ **ձճմարտության ու բարու բացահայտմամբ և դրանց նշանակալիության տեսականորեն ներկայացմամբ:** Մարդկային համաբովանդակ կյանքում բարու կենսագործմանը սոցիոլոգիայի աջակցողական մասնակցությունն այդպիսով կայանում է որպես միայն տեսական: Եվ մարդկային ինքնությունների կեցողության ու գոյակցության իսկության և բարեկարգության միտող ու հաստող իմաստն ու նշանակալիությունը սոցիոլոգիան ներկայակից է դարձնում մարդկության կյանքում միմիայն տեսականորեն ներկայացմամբ, այլ ոչ պրակտիկ իրագործմամբ:

Արդարև, սոցիոլոգիան իրական կյանքում ոչ միշտ ու ոչ լիովին իր բուն կոչմանը համապատասխան իր գոյության մեջ գործնականի համեմատ առավել տեսական-ձանաչողական իր պոտենցիայի և ակտուալացման գերակայությամբ՝ իրենում բացահայտելի է դարձնում դեռ միայն **ձանաչողական հետաքրքրություն և հենց այդչափ բացություն** հումանիտար՝ մշակութորեն ու սոցիալականորեն նշանակալի իրողությունների նկատմամբ: Զանաչողական հետաքրքրությամբ աշխարհի նկատմամբ բացվածություն ունեն ինչպես հումանիտար գիտությունները, այնպես էլ բնագիտությունը՝ ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը և այլն: Բացության այս հատկությունը ունիվերսալ է բոլոր գիտությունների համար և ներհատուկ է հենց մարդկային ինքնության գոյությանն այս աշխարհում: Սակայն, սոցիոլոգիան ուսումնասիրելով մշակութորեն, ապա և սոցիալականորեն նշանակալի իրողությունները, չունի՞, արդյոք, իր **բացության իսկությունը** բացահայտող մեկ այլ առանձնահատկություն ևս, որը սահմանելով առարկայական տիրույթի առավել նեղ ընտրություն, քան այն, որն իրականացնելի է իրականության նկատմամբ սոսկ ձանաչողական հետաքրքրության բացությամբ, կարող էր առավել համապատասխան լինել նրա ուրույն առարկայական տիրույթին:

Սոցիալական գիտության՝ իր առարկայական տիրույթի նկատմամբ համապատասխան բացության և մեթոդի հարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են բազմաթիվ փիլիսոփաներ և սոցիոլոգիայի տեսաբաններ: Մ. Վեբերը հետևելով Բադենյան դպրոցի ներկացուցիչներին՝ Վ. Վինդելբանդին և Հ. Ռիկերտին, մասնավորապես սոցիալական գիտության նկատմամբ կիրառությամբ է նաև ասում, որ սոցիոլոգիային հատուկ է **արժեքային կողմնորոշվածություն**, և ըստ այդմ՝ այն առանձնացնում է իր ուսումնասիրության առարկայական տիրույթը: Ըստ Մ. Վեբերի, իրեն հատուկ և բնորոշող արժեքային կողմնորոշմամբ է, որ սոցիոլոգիան որպես իր ուսումնասիրության ենթակա ոլորտ է ընտրում ու սահմանում մշակութորեն նշանակալի կենսական իրողությունները:

Սոցիալական գիտության և հենց սոցիոլոգիայի՝ «ինչպես» և «ինչի համար» գոյության իսկության բացորոշման համար հիմնարար նշանակություն ունի նկատել, որ բացի «տեսա-ձանաչողական հետաքրքրությունից», սոցիոլոգիան իր բացությունը բնորոշող էական առանձնահատկություն ունի, պե՞տք է ունենա նաև «գործնական հոգածություն»²¹, թեև դժվար է ասել, թե նրանում սկզբունքորեն ու միշտ է այն որպես այդպիսին, այսինքն՝ որպես այլի ու այլոց նկատմամբ սոցիոլոգիայի բացության էական, նախընտրելի հատկություն և այդպեպ արդեն սոցիոլոգիան իր իսկ կոչումի պիտո-

21 **Ջիյան Ա.**, «Հոգածությունը» որպես ունիվերսալ ինտենցիա ու հիմք սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի փոխհարողակցության, «Փիլիսոփայությունը արդի աշխարհում», գիտաժողովի նյութեր, գիրք IV, ՀՀ ԳԱՍ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, «Լինուշ», Եր., 2014, էջ 136-147:

յական անհրաժեշտության ու նախընտրելիության մեջ կայացնող հիմնորոշ բաղադրատարր գիտակցվում: Սոցիոլոգիայի բացությունն իր առարկայական տիրույթի նկատմամբ որպես «հոգածություն» հասկանալը, ըստ էության, այդ բացությունը հասկանում է որպես **ուղղորդված ու որոշակիորեն կազմակերպված բացություն**, և իր այդ որակով այն **առավել որոնող, իմաստավորող ու ընտրողական է**, քան որպես գուտ «ճանաչողական հետաքրքրություն» ներկայացող բացության դեպքում, ինչպես իր ուսումնասիրության ենթակա իրողությունների ու ամբողջական տիրույթի, այնպես էլ՝ իր ինքնահասկացման փնտրտուքի և երկուստեք սահմանման մեջ: Սոցիոլոգիայի բացության որպիսության այսկերպ հասկացումն ու մեկնաբանությունը սոցիոլոգիայի վերաբերյալ խորհրդածություններն ուղղում է ոչ միայն մարդկային ինքնությունների կեցողության և գոյակցության սոցիալական, բարոյական, տնտեսական, քաղաքական և այլ առումներով բարեկարգությանն ուղղված մտքի, խոսքի և գործի իմաստության ու գիտության անտիկ շրջանի, միջին ու նաև հետագա դարերում լիովին չկորած ավանդության ակունքին²², այլև ներկայանում է որպես ժամանակակից փիլիսոփայության համատեքստում՝ սոցիոլոգիայում արդեն իր կիրառությունը գտած «**խնամքի**» կամ հենց «**հոգածության**» (գերմ. Sorge, անգլ. care) Մ. Հայդեգերի ըմբռնման²³ և սեկ կիրառություն:

Մարդկային կյանքի բարեկարգության «**հոգածության**» իր սկզբունքային բացությամբ է սոցիոլոգիան ընտրում իր ուսումնասիրության առարկայական տիրույթը: Իր «ինչ» ու «ինչպես» գոյությունն այդկերպ ինքնահասկանալով՝ սոցիոլոգիան իր բացություն և դիտավորություն է սահմանում ու կատարումի բերում ոչ միայն մարդկային հոգևոր-քաղաքակրթական կյանքը որպես այդպիսին՝ ըստ իր սկզբունքային կոչումի, բաղկացնող ու ներկատարելագործաբար կայացնող, այսու և՛ էականորեն նշանակալի իրողությունների գոյության որպիսության բացահայտումը, այլև այդ որպիսությունում դրանց իսկական ու անիսկական գոյությունների հայտորոշումը: Քանզի հումանիտար յուրաքանչյուր բներևույթ²⁴ իր կոնկրետ ակտուալացած, եղելական գոյության մեջ ունի ոչ միայն այն հատկությունները, որ և հիմնում են նրա, ըստ իր կոչման, իսկական գոյությունը, այլև այն հատկությունները, որ և նրան մատնում են անիսկական գոյության, և խն-

22 Բազմաթիվ մտածողների, այդ թվում նաև պատմիչների աշխատություններում հանդիպում ենք այն մտքին, որ բարեկարգությանն ուղղված գործունեության սկզբունքային ելակետ էր տեսնվում մարդկանց կյանքի նկատմամբ «**հոգածությամբ**» ուղղորդված բացությունը: Այսպիսի կողմնորոշում ու ելակետ կարելի է տեսնել նաև Մովսես Խորենացու պատմությունում Վաղարշակ Ա Իմաստունի Հայաստանում Արշակունյաց տոհմի գահակալության հիմնադիր թագավորի, հայոց համընդհանուր կենսակարգի ու նաև խավերի կենսակերպի բարեկարգությանն ուղղված գործունեության մասին պատմող էջերում (տես **Մովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Եր., 1991, էջ 29-30, 104-118):

23 Տես **Heidegger M.**, Being and Time, trans. by John Macquarrie and Edward Robinson, Harper and Row publishers, New York and Evanston, p. 237.

24 Ֆենոմեն - բներևույթ՝ բուն երևույթ կամ ինքներևույթ՝ ինքն իրեն ցուցանող երևույթ:

դիրն այստեղ այն է, թե՛ դրանցից ո՞րն է բներևույթի եղելությունում, ներկայությունում և ապագայում հնարավոր լինելիությունում գերակա, և որի՞ն միտվածությամբ է այդ բներևույթն իրագործում իր գոյության «ինչպեսն» ու «ինչի համարը»:

Ջուս «ձանաչողական հետաքրքրության» բացությամբ սոցիոլոգիան ուսումնասիրում, հասկանում և բացահայտում է տվյալ բներևույթի որպիսությունը: Իսկ «հոգածությամբ» ուղղորդված ու կազմակերպված իր բացությամբ կայացող ուսումնասիրությամբ ու քննա-հասկացմամբ՝ սոցիոլոգիան բացորոշում է բներևույթի գոյության որպիսության բուն իսկությունը և հենց անհրաժեշտորեն ու նախընտրելիորեն այդ իսկությունում հաստատող **գոյության կերպը, իմաստն ու իմաստության խորհուրդը**, որից և տարբերակում է նույն այդ որպիսության մեջ բուն իսկությունից ու իսկական գոյությունից թյուրախել ալլակերպվածությունը՝ անիսկության տանող ու հաստող անիմաստ, անխորհուրդ ու ալլակերպ գոյությունը: Եվ հենց «հոգածությամբ» ուղղորդված ու կազմակերպված բացությունն է, որ մարդկային կյանքի իրողությունում որոնում է **բարեկարգության հնարավորությունը հայտող իմաստը և դրան հասանել ընձեռող ու հաստող իմաստությունը**:

Իսկ ի՞նչն է հնարավոր դարձնում սոցիոլոգիայի գոյության մեջ «հոգածության» պոտենցիան և ըստ այդմ ուղղորդված բացությունը և այսկերպ արդեն հնարավոր դարձող սոցիոլոգիայի իսկական գոյությունը: Այս հարցադրությանը կից է և նույնի վերաբերյալ է նաև հետևյալ հարցը, թե՛ սոցիոլոգիայի եղելականության մեջ ինչի՞ պական է նրա բացությունն ու գործառնությունը հանգեցնում «անհոգածության», նույն է թե ասել՝ անհոգ ու անտարբեր, իր իսկությանն օտարոտի ալլևալլ շահերով անազատ ու կապանքված թյուրուղղորդության ու որպիսության: Սոցիոլոգիայի նախկին, այժմյան ու ըստ այդմ՝ նաև կանխատեսելի հետագա գոյությունում և առ այսօր ինքնահասկացվածությունում ինչի՞ պական է նրան հանգեցնում իր որպես այդպիսին գոյության կոչումին ու ըստ այդմ՝ իսկությանը, իմաստին և իմաստությանը անհամապատասխան լինելիության և, ավա՛ղ, հենց ժամանակակից սոցիոլոգիայի՝ իր բուն իսկությունից ու գոյադրող իմաստության խորհուրդից, ինչպես նաև ինքնահասկացվածությունում՝ այդ խորհրդիմացությունից օտարացյալ և այդկերպ՝ իր որպես «ինչ» ու «ինչպես» լինելության ու գործառնության անխորհուրդ ու անխորհրդիմաց կացությամբ:

Այս առնչությամբ հարկավոր է նախ և առաջ ասել, որ **հենց մարդկային կյանքն է, որ և իրենում անհրաժեշտ ու նախընտրելի բարեկարգության պակասով և ուրեմն՝ նույն այդ բարեկարգության լրումի մարդկային ձգտմամբ՝ կարիք ունի սոցիալական գիտության գոյության, և այդ կարիքն է հիմնում սոցիալական գիտության ու կոնկրետ-**

րեն՝ սոցիոլոգիայի գոյության իմաստը: Այդ կարիքը մարդկային կյանքում բարեկարգության հնարավորությունն իմացահայտող ու կենսագործող «հոգածության կարիքավորությունն» է, որ ներկա է մարդկանցից յուրաքանչյուրի կենսագոյությունում, և այդ կարիքին, նույնն է թե՛ գոյութենական հարցին ի պատասխան է գոյության կոչվում և ծնունդ առնում ընդհանրապես՝ սոցիալական գիտությունն ու կոնկրետորեն՝ սոցիոլոգիան: Եվ **մարդկային կյանքի ու համակեցության համար ներպիտոյական՝ անձանց, խմբերի ու հասարակության կենսագործունեությունում մարդասիրության (աստվածասիրությամբ ճշմարտված մարդասիրության) ներկայությունն է հիմնում «հոգածությունը», էացնում այն՝ ծնում, հաստատ պահում ու առավելացնում, որով և՛ մարդկային ինքնությունը, կյանքն ու մշակույթը՝ առ անհրաժեշտ ու նախընտրելի վերընթացությամբ կայացնում են կատարելությունն ու բարեկարգություն:**

Իսկ ինչո՞ւ է մարդկային կյանքի՝ առ բարեկարգություն «հոգածությամբ» բացությունը սոցիալական գիտության որպիսությունը միաբերող առանձնահատկությունների վերաբերյալ խորհրդածող ու տեսաբանող մտքին նկատվում որպես սոցիալական գիտությանն անհրաժեշտ ու նախընտրելի ստրիբուտ առավել ընդգծվածությամբ, քան թե բնագիտությանը: Անշուշտ, երկիր մոլորակի շրջանակում, այսինքն՝ մարդկային հոգածությանը հասանելի լոկալ տիրույթում, **բնագիտության՝ առ աշխարհ** ուղղորդված բացության որպիսությունը նույնպես բացորոշելի է որպես ոչ միայն գուտ ճանաչողական հետաքրքրություն, այլև հոգածություն: Հարկ է, սակայն, ամրագրել, որ **մարդկային իրողությունները սկզբունքորեն առավել չափով են կարիքավորություն դրսևորում իրենց նկատմամբ հոգածության:** Կարող ենք նաև նկատել, որ հենց բնության ու աշխարհի նկատմամբ հոգածությունը նույնպես հիմնված է օրգանական կենսոլորտի, որում և մարդկային, կենդանական, բուսական սեռերի որպես այդպիսին, հավասարակշիռ ու բարեկարգ գոյության և գոյակցության պահպանության սկզբունքորեն անհրաժեշտության և մարդու համար նաև որպես նախընտրելի հասկացվող դիտավորության վրա: Մարդկային էակն է, որ ունի ողջ կենսոլորտի նկատմամբ «հոգածության» բացությամբ ուղղորդվածությունն ընտրելու հնարավորությունն ու պոտենցիա՝ կյանքի ամբողջությունում իր մասնակցության չափի մեջ այն իրագործելու: Եվ հարկ է նկատել, որ մարդկային ինքնության, ինչպես նաև սոցիալական գիտության «հոգածությամբ» բացությունն ու կատարումը, ըստ էության, ադեկվատ պատասխան է մարդկային կյանքի էականորեն նշանակալի իրողություններում ներկա կարիքավորության հոգածությանը՝ առ բարեկարգություն: Այսպիսով, հասկանալի է դառնում և կարող ենք արդեն ասել, որ սոցիոլոգիան իրեն առաջադրյալ՝ հիմնարար ու սկզբունքային խնդիր, ուստի և հանձնառություն ունի իրենում հաստատագրել դիտավորություն՝ մշակու-

թորեն և որպես այդպիսին՝ կենսամշակութորեն ու կոնկրետորեն նաև սոցիալականորեն նշանակալի իրողություններում (քանզի «սոցիալականը» ևս «կենսամշակութի» բաղադրատարր է և «սոցիալականորեն նշանակալին» մասնատարրն է «կենսամշակութորեն նշանակալի») ուսումնասիրել ու բացահայտել **«բարեկարգության միտող հոգածության պականն ու հենց կարիքավորությունը»** և դրան կորելյատ՝ «ադեկվատ հոգածության» ուղղորդված բացությամբ իրականացնելով հետազոտությունը, իր նպաստավոր ու սատարող աջակցությունն իրագործել կարիքավորության հիմնախնդիրների լուծմանը: Հասկանալի ու նաև ընդունելի կարող է լինել նույնիսկ հետևյալ միտքը. սոցիալական գիտությունը և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան, քանի դեռ չի կորցրել, քանի դեռ նրանում չի մարել «հոգածության» գորությունը (պոտենցիան), ուստի և այդ «հոգածությամբ բացությունը» մարդկային կյանքի իրողությունների նկատմամբ, այդ պոտենցիայով ու բացությամբ եղելականացող իր գործառնությունը մարդկային՝ մշակութորեն ու սոցիալականորեն..., միով բանիվ՝ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի կյանքում, հնարավորություն ենք ունենում ասել, որ նրա գոյությունն աշխարհում իմաստագուրկ չէ ու անիմաստության չի մատնվել:

Արդ՝ սոցիոլոգիային՝ ըստ կատարումի կարելի է սահմանել մտքի հետևյալ բանաձևով. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական կյանքի որպես այդպիսին կայացման ու գործառնության և առ բարեկարգություն ներկատարելագործման հնարավորությունը հայտող և հասանել ընձեռող իմաստն ու իմաստության խորհուրդը քննահասկացող ու մեկնողաբար բացորոշող:**

Մարդկանց կյանքում, այն է՝ մարդկային կյանքի որպիսությունը կայացնող ու այդկերպ՝ էական բաղկացուցիչներում ու ներգործնորեն նշանակալի այլևայլ իրողությունների այդ իսկ նշանակալիությունում ներկատարելագործուն «բարեկարգություն» կարող է որոնվել զանազան առումներով, օրինակ՝ տնտեսական, քաղաքական, կրթական, մշակութային, բնապահպանական, տեխնիկական առաջընթացի և այլն: Բոլոր դրանք կարող են լինել մեկամբողջականի մասնավոր բաղադրիչներ: Որպես այդտեսակ մեկամբողջական կարող է ներկայանալ, անշուշտ, «մարդկային հոգևոր-քաղաքակրթական կյանքը»: Իսկ ի՞նչը ևս կարող է նկատի առնվել որպես այդ բոլորն ի մի բերող ու միասնող այնտեսակ մեկամբողջականություն, որի նկատմամբ և ասվել, որ «առ բարեկարգություն ներկատարելագործման հնարավորությունը հայտող և հասանել ընձեռող» հատկություն ունի սոցիոլոգիան: Մարդկային ինքնության որպես այդպիսին գոյությունն ու գոյակցությունը և այսկերպ՝ անձանց, խմբերի, համախմբությունների, հանրույթների ու ողջ հասարակության որպես այդպիսին գոյությունը, այսու և՛ ամենքի հոգևոր-քաղաքակրթական մարդկային ինքնությամբ կենալն ու դրան էականորեն նշանակալի ի-

րողություններն է հարցադրում սոցիոլոգիան՝ բացահայտելով իսկություն և բարեկարգության հնարավորությունը հայտող և հասանել ընձեռող, նույն է թե՛ բարեկարգության միտող ու հիմնող, իմաստ ու իմաստության խորհուրդ: Տնտեսական, քաղաքական, կրթական, մշակութային, բարոյական, առողջապահական, բնապահպանական, տեխնիկական առաջընթացի բոլոր այլևայլ խնդիրներն իրենց հերթին սահմանվում ու ժամանակ առ ժամանակ նաև վերահիմաստավորվում են «մարդկային ինքնության գոյության և գոյակցության» նկատմամբ և, ըստ էության, աշխարհում մարդկային գոյության ամբողջականությունը որպես այդպիսին կայացնող ներքին կամ արտաքին բաղադրիչներ ու գոյապայմաններ են: Այսպիսի ճշգրտմամբ սոցիոլոգիայի ամբողջական սահմանումը՝ ըստ առարկայի և ըստ կատարումի (տեսական), կձևակերպվի առավել բացորոշ. **սոցիոլոգիան գիտություն է՝ ամենքի (անձանց, խմբերի, հասարակությունների ու համայն մարդկության)՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնությամբ կենալու իսկությունն ու բարեկարգության պոտենցիան ու կենսագործման հնարավորությունը բացահայտող:**

Սահմանման բանաձևը կարող է լինել նույնիսկ ավելի հակիրճ, քանզի բարեկարգության պոտենցիան, կամ՝ բարեկարգության միտող ու հաստող իմաստը արդեն իսկ նկատի է առնվում մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնությամբ կենալու որպիսության բացահայտման մեջ:

Սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնությամբ կենալու իսկությունը բացահայտող:

Նկատենք, որ հարցադրելով ու բացահայտելով մարդկային ինքնությամբ կենալու իսկությունը, սոցիոլոգիան, ըստ էության, հարցադրում ու բացահայտում է մարդկային ինքնության՝ առաքինություններով ներկատարելագործվող և այդկերպ՝ առաքինակարգ հոգևոր-քաղաքակրթական վերընթացությամբ [առ Աստված] կենալու **իսկությունը հայտող իմաստն ու իմաստությունը:** Արդ՝ սոցիոլոգիայի սահմանումը՝ ըստ առարկայի ու կատարումի (տեսական) կընդունի հետևյալ տեսքը. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական առաքինակարգ ինքնությամբ կենալու իսկությունը հայտող իմաստն ու իմաստությունը բացորոշող:**

Կարելի է արդեն նկատել, որ վերոբերյալ՝ ըստ առարկայի ու կատարումի միասնական սահմանման բանաձևերի տարբերակներով սոցիոլոգիայի բնության ու գոյության բացահայտումը, այլ կերպ ասած՝ սոցիոլոգիայի որպես այդպիսին գոյության իսկության բացորոշումը, սոցիոլոգիայի որպես «ի՞նչ», «ինչպիսի՞ ինչ» և «ինչի՞ համար» գոյության ներքում հաստատում է նրան իմաստնացնող միտումի ներկայություն: Քանզի ի՞նչ է, արդյոք, մարդկային ինքնության գոյությանն ու այլոց հետ գոյակցությանը վերաբերող խորհրդիմաց իմաստությունը, եթե ոչ այդ գոյավորության բուն իսկության և

բարեկարգության միտող իմաստի ու խորհուրդի բացահայտումը և ըստ այդմ՝ անձանց կեցողությանն ու հանրության համակեցությանը նպաստավոր տեսա-գործնական (այս ենթավերնագրում՝ առավելապես տեսական) աջակցության և հասկացումը, և՛ իրագործումը:

Արդ՝ սոցիոլոգիայի իմաստնացման և հենց անհրաժեշտ ու նախընտրելի գոյությամբ ու գործառնությամբ ներկայությունը հնարավորում է նաև սոցիալական գիտության նորովի ու առավել նախընտրելի ներկայություն՝ իր տեսա-գործնական ամբողջական կատարումի մեկ-միասնականությամբ: Ինչպե՞ս: Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է ամրագել, որ սոցիոլոգիան հարցադրելով ու ինքնահասկանալով իր ինքնությունը՝ ուսումնասիրում է մարդկային համատեղ կյանքի համար էական ամենայն իրողությունները, որոնք ունեն «մշակութային» և այսկերպ արդեն նաև «սոցիալական» և ավելին՝ «հոգևոր-քաղաքակրթական նշանակալիություն», և բացահայտում է դրանց և՛ իրականությունում կոնկրետ-առանձին, և որպես այդպիսին՝ անհրաժեշտ ու նախընտրելի գոյության առանձնահատկությունները՝ որպես «ի՞նչ», «ինչպիսի՞ ինչ», «ինչպե՞ս» և «ինչի՞ համար» գոյությունը: Արդարև, սոցիոլոգիայում ուսումնասիրությունը կարող է իրագործվել երկու պլանում՝ և՛ ըստ **գոյութենական ճմարտության**՝ բացահայտելով իրականությունում նրա որպիսությունը՝ հնարավոր իր թյուրությամբ հանդերձ, և՛ ըստ **նպատակաբանական ճմարտության**՝ բացահայտելով նրա անհրաժեշտ ու նախընտրելի պիտոյականությամբ լինելիությունը: Հնարավոր այս երկու՝ «գոյութենական» ու «նպատակաբանական» ճմարտությունների առումներով և ուրեմն՝ ճմարտության երկու այդ ասպեկտների փոխհամադրությամբ ու մեկ-միասնականությամբ հետազոտության ընթացքում ուսումնասիրման ենթակա կարող է լինել «սոցիալական» ու նույնիսկ «սոցիալականորեն ու ավելին՝ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի» իրողության, աստ՝ կոնկրետորեն սոցիոլոգիայի և՛ «ինչը», և՛ «ինչպիսի ինչը», և՛ «ինչի համարը», դրանց հետ մեկտեղ նաև գոյության «ինչպեսը»: Այդ խնդրակարգի ուսումնասիրությամբ բացահայտելի է դառնում դրանց գոյության իսկությունը՝ և՛ եղելական առանձնահատկությունը, և՛ անհրաժեշտորեն ու նախընտրելիորեն պիտոյականը: Իսկության սկզբունքային լրիվության, այսինքն՝ իսկության **գոյութենական ու նպատակաբանական** բաղադրիչների (կամ ասպեկտների) միահյուսությամբ՝ մեկ-միասնական իր լրումի կատարումին հասցնելու առումով, իհարկե, նախընտրելի է հետազոտության մեջ ի մի բերել և, որպես որոնելի իսկություն, բացահայտման ենթակա դիտել և՛ իրականությունում կոնկրետորեն ակտուալացած գոյությունը, և՛ սոցիալական իրողության որպես այդպիսին գոյության պոտենցիան: Այսկերպ հնարավոր է դառնում հասկանալ ու բացահայտել սոցիալական իրողության **գոյության իմաստը**՝ և՛ որպես տվյալ կոնկրետ իրողություն նրա գոյության իմաստը, և՛

այն իմաստը, որին կարելի է, որպես անհրաժեշտ ու նախընտրելի, ձգտել տվյալ իրողության ժամանակընթաց գոյության մեջ, մարդկային մտքի, խոսքի, գործի մասնակցությամբ այն դեպի բարեկարգություն կատարելագործելով: Եվ այս կարգի հետազոտության ենթակա կարելի է դիտարկել, որպես մշակութորեն, ուստի և սոցիալականորեն ու ավելին՝ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի գոյավոր, կրթությունը, գիտությունը, մարդկային ինքնությունն ու սոցիալական կյանքը, պետությունը, տնտեսությունը և-կամ այլ հումանիտար իրողություն:

Աստ՝ «իմաստության հերմենևտիկայի» հայեցակարգի տեսադաշտում ու մեթոդաբանությամբ մեկնորոշվեց, որ սոցիոլոգիան իր իսկական գոյությունում ուսումնասիրելով «բուն սոցիալական» և-կամ «սոցիալականորեն նշանակալի» և նույնիսկ ավելին՝ «հոգևոր-քաղաքակրթականորեն նշանակալի» իրողությունները, «հոգածությամբ» ուղղորդված իր բացության տեսադաշտում (հորիզոնում) բացահայտում է այդ իրողությունների որպես այդպիսին գոյության իսկությունն ու բարեկարգության միտող իմաստը: Եվ սոցիոլոգիայի այսկերպ սահմանումը, ըստ էության, «սոցիալական աշխատանքի» նկատմամբ առավել մերձավոր դիրքի և փոխադարձ բացության ու հաղորդակցականության մեջ է հաստատում «սոցիոլոգիայի» և՛ սկզբունքային պոտենցիան, և՛ նախընտրելի ներկայությունը: Ինչպե՞ս հասկանալ այս միտքը:

Սոցիալական աշխատանքը (հայերեն առավել դիպուկ ու ձշգրիտ անվանմամբ՝ **սատարագիտությունը**) նույնպես հարցադրելով ու ինքնահասկանալով իր ինքնությունը, ուսումնասիրում է իր որպես «ի՞նչ», «ինչպիսի՞ ինչ», «ինչպե՞ս» ու «ինչի՞ համար» գոյությունը, կայանալով որպես ընդհանուր գիտելիք և այդ կարգում՝ որպես ուսուցակարգ, արվեստավոր գործունեություն ու հենց գիտություն: Եվ սոցիալական աշխատանքի բնության, որպես այդպիսին գոյության իսկության ու իմաստության, նրա առարկայի, դիտավորության ու կատարումի բացորոշումներում կարելի է նկատել սոցիոլոգիայի հետ սկզբունքային ու հիմնորոշ նմանակերպություն: Հիրավի, երկու այս գիտակարգերում հետազոտվում են սոցիալական իրողությունների գոյությունը և բացորոշվում իսկությունը՝ որպես այդ գոյության իմաստ ու խորհուրդ: Սոցիալական աշխատանքում նույնպես ներկա է այն իմաստնացնող միտումն ու նաև նրա յուրահատկությունն է՝ հարց տալ իր մասին, իրագործելով ինքնահասկացում և նորովի, կատարելագործվող ինքնակայացում, և սոցիալական աշխատանքը նույնպես իր տեսա-իմացական գործառնությունով ուսումնասիրում է «մշակութորեն», որում և ի մասնավորի՝ «սոցիալականորեն» նշանակալի և նույնիսկ առավելաչափ համընդգրկունությամբ՝ «հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի» իրողությունների գոյությունը և բացահայտում իսկությունը: Եվ ի տարբերություն սոցիոլոգիայի դեռևս

առավելաչափ տեսական բնույթի գործնականության, սոցիալական աշխատանքը ոչ միայն տեսա-ինացական իր կատարումով ու հենց գործառնությունով հասկանում ու բացահայտում է իր խնդրո նյութ հանդիսացող՝ անձանց, խմբերի, համախմբությունների ինքնությունների գոյության ու գոյակցության մեջ կարիքավորության իրողության իսկությունն ու նրանց նկատմամբ բարին, այլև իր գործնական կատարումով ուղղակիորեն գործում է այն՝ անմիջական հաղորդակցությամբ տեղի ունեցող աջակցողական միջամտությամբ իր **սատարագետ** մասնակցությունն իրագործելով նրանց կյանքում: Սոցիալական աշխատանքի տեսա-գործնական կատարումն է՝ անձանց, խմբերի, համախմբությունների, հանրույթի կարիքավորության հիմնախնդիրների ադեկվատ լուծումներին ուղղորդված նպաստավոր գործունեության խնդրակարգում բացահայտել բարեկարգության միտող իմաստը և սատարագետ աջակցողական միջամտությամբ իրագործել այն մարդկանց կյանքում: Եվ հիարկե, այս երկու գիտակարգերում կան նաև զանազանող, տարբերակիչ առանձնահատկություններ նույնպես: Քանզի սոցիոլոգիայում հետազոտվում են սոցիալական իրողությունների գոյությունը և բացորոշվում իսկությունը՝ որպես այդ գոյության իմաստ ու իմաստության խորհուրդ, և ձեռքբերյալ գիտական արդյունքը կարող է իր վերաբերությունը գտանել անձանց, խմբերի, հանրույթի կյանքում սկզբունքորեն միջնորդավորված կերպով, հասարակության **կառուցվածքների** միջոցով, դրանցում փոփոխությունների իրագործմամբ, ի տարբերություն սոցիալական աշխատանքում կառուցվածքներով միջնորդավորված գործելակերպի հետ մեկտեղ՝ նաև հենց **անմիջական հաղորդակցությամբ իրագործվող աջակցության**: Ի տարբերություն սոցիոլոգիայի, որում բացահայտված իսկությունները առավելապես իրենց գործնական վերաբերությունը ցուցաբերում են սոցիալական կառուցվածքներին, սոցիալական աշխատանքը՝ և՛ իր կողմից իսկության բացահայտումը, և՛ տվյալ սոցիալականորեն նշանակալի իրողության նկատմամբ բարեկարգության դիտավորությամբ մասնակցությունը, կարող է լինել և՛ սոցիալական կառուցվածքներով միջնորդավորված, և՛ անմիջականորեն, իր տեսա-ինացական արդյունքը կենագործելով անձի, խմբի (մասնավորապես՝ ընտանիքի), հանրույթի ու համախմբության և ողջ հասարակության կյանքում:

Երկու այս գիտակարգերի տարբերության առնչությամբ կարելի է նաև ամրագրել, որ սոցիոլոգիան, իր իսկությանը համապատասխան, սկզբունքորեն կարող է որպես այդպիսին գոյություն ունենալ բոլոր հասարակություններում, նաև այնպիսի, որոնցում համեմատաբար քիչ է հոգածությունը անձանց, խմբերի, համախմբությունների նկատմամբ՝ կա՛մ պետության ու պետական կառույցների, կա՛մ նույնիսկ հասարակական կազմակերպությունների կողմից: Այն կարող է իր իսկության ոչ ամբողջական, այլ՝ այս

կամ այն չափ մասնակի ակտուալացմամբ գոյություն ունենալ անգամ **բռնությամբ առավել և հոգածությամբ նվազ** հասարակություններում, եթե միայն կառավարող ավագանին չի այլակերպում նրա տվյալները, թաքցնելու համար իրենց այլևայլ շահերի ու նպատակների տեսակետից ոչ նպատակահարմար իսկությունը և հայտնելու միայն իրենց տեսակետների ու գործունեության նկատմամբ հասարակության մեջ հավանություն արարող և սոսկ դրան միտված խեղաթյուրված տեղեկություններ ու իմացություն: Այնինչ, ի տարբերություն սոցիոլոգիայի, սոցիալական աշխատանքի՝ իր իսկությամբ, անխեղակերպ գոյությունն ու կատարելագործումը ինքնին, արդեն իսկ խոսում է հասարակության մեջ առավել հոգածության, կարեկցանքի, աջակցության և, իհարկե, այս բոլորի հիմքում հոգևոր սիրո ներկայության և ապա՝ նաև հնարավոր առավելագույն համաներկայության մասին՝ անձանց, խմբերի, համախմբությունների, և հենց հանրույթի կարիքավորության նկատմամբ, որ և հասարակության՝ մշակութորեն առավել զարգացած, բարոյականության միտող հոգևոր-քաղաքակիրթ կայացածությունն է հաստատում, հասկանալի ու բացահայտ դարձնում:

Երբ սոցիոլոգիան և սոցիալական աշխատանքը հասկացվում են իրենց իսկական գոյության, այսինքն՝ իրենց կոչմանը համապատասխան, ուստի և իրենց իսկությունն իրենում պահող գոյության մեջ, նրանց **ընդհանրություններն ու տարբերակիչ առանձնահատկություններն առավել հնարավոր են դարձնում այդ գիտակարգերի միջև փոխբացությունը նրանցից յուրաքանչյուրի համեմատ համընդգրկուն առարկայական տիրույթի վերաբերող «սոցիալական գիտության» շրջանակներում:** Նույնիսկ ավելին՝ այս գիտակարգերն իրենց **փոխբացությամբ կայացող հաղորդակցականությամբ ու փոխլրացմամբ** իր լրումին ու նախընտրելի կատարումին են հասցնում «սոցիալական գիտությունը» կամ «գիտական սոցիալական հետազոտությունների» ոլորտը, սոցիոլոգիայի առավել տեսական գործառույթը և սոցիալական աշխատանքում՝ տեսականի հետ մեկտեղ գործնականի առավելագույն ներկայությունը միահյուսելով համընդգրկուն այդ շրջանակներում: Տեսական ու գործնական իր պոտենցիային համապատասխան իր գործառնության երկու այս բաղադրիչների միահյուս ներկայության հաստատումը «սոցիալական գիտության» կամ «գիտական սոցիալական հետազոտությունների» գործառնությունն ամբողջացնելով հասարակության կյանքում, ըստ էության, **կատարելության տանող հնարավորության** մեջ է տեսանել տալիս այդ գործառնության դիտավորությունը, ընթացքը և իրագործումը, սոցիալական գիտության կամ հետազոտության՝ «ի՞նչ», «ինչպիսի՞նք», «ինչի՞ համար» գոյությունը և այդ գոյության «ինչպե՞սը»:

Սոցիոլոգիան որպես այդպիսին իր գործունեությամբ՝ ձեռք է բերում **սոցիալական կյանքում ճշմարտության ու բարու իմացություն և ապա՝**

իրագործում հասարակության կյանքում և կառուցվածքներում բացահայտվող բարեկարգության կարիքավորությանն ադեկվատ *լուսավորական աջակցություն*:

Իսկ **սոցիալական աշխատանքը** լրացնում է **սոցիոլոգիային և հենց համարում այդ աջակցությունը հասարակության կյանքում**, տեսա-գործնական իր գործառնությամբ սոցիալական կյանքում առկա և հնարավոր իմաստունն ու գիտելիին **անմիջականորեն** ներկա ու մասնակցական դարձնելով կարիքավորության մեջ տեսնվող՝ արդեն մինչև իսկ կոնկրետ անձանց, խմբերի, համալսմբությունների, հանրային կյանքում: Այս գիտակարգերի երկուստեք մասնակցությամբ հնարավոր է դառնում տեսականի ու գործնականի երկմիասնությամբ իրագործելի՝ **սոցիալական կյանքի իմաստասիրությունը** և-կամ **սոցիալական կյանքի տեսա-գործնական իմաստության գիտությունը**: Եվ ըստ սոցիալական կյանքի տեսա-գործնականորեն ամբողջական «իմաստության գիտության»՝ հնարավորվում ու իրագործելի է դառնում նպաստավոր ու հենց սատարող աջակցությունը մարդկային ինքնությանն ու գործառնություններին, հասարակության ու համայն մարդկության կյանքի բովանդակ տիրություն՝ այն բաղկացնող ու ծավալող ապրման, մտքի, խոսքի ու գործի ոլորտներում բացահայտվող բարեկարգության կարիքավորության նկատմամբ: Սոցիալական աշխատանքի և սոցիոլոգիայի՝ միմյանց նկատմամբ փոխբացությամբ տեսնվող ու կայացող հարաբերակցությունը հնարավոր է դարձնում այդ գիտակարգերի միջև **իսկորեն հիմնային հաղորդակցականություն և նույնիսկ փոխլրացականություն** «սոցիալական գոյք» տեսա-գործնականորեն իմաստասիրող նրանց դիտավորության, կերպարանումի ու կատարումի բաղադրյալ խնդրակարգում՝ հումանիտար առարկայական ոլորտի ընտրության, ուսումնասիրության, իսկությունն ու բարեկարգության հնարավորությունը հայտող իմաստի ու իմաստության խորհուրդի մեկնորոշման և ներգործուն ու հենց նպաստավոր աջակցությամբ մարդկային ինքնության ազատ գոյության և այլոց հետ գոյակցության կենսագործման խնդիրներում: Արդ՝ **սոցիալական գիտության տեսա-գործնական կատարումի ամբողջականության հայտը կենսագործվում ու հենց լրումի է գալիս սոցիոլոգիայի ու սոցիալական աշխատանքի (սատարագիտության)՝ փոխլրացաբար միավորմամբ ու հենց մեկ-միասնականության հաստատմամբ**:

Զարմանքի ու հեռանկարայաին մտորումների ուղի է բացում այն, որ «սոցիոլոգիա» ու «սոցիալական աշխատանք» գիտակարգերը կարող են ներկայանալ որպես իրենց ուսումնասիրության ու տեսա-գործնական ներգործության առարկա իմացահայտելով ու սահմանելով միևնույնը՝ **մարդկային հոգևոր-բաղաբակրթական կյանքի որպես այդպիսին՝ ներկատարելագործվող կայացումը, բաղադրակազմն ու գործառնությունը**: Այս երկու

գիտակարգերի ուսումնասիրության և տեսա-գործնական ներգործության նույնական առարկա, մտքի այլ բանաձևմամբ, կարող է ներկայանալ ու սահմանվել դարձյալ միևնույնը՝ **մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնությունը, կյանքն ու մշակույթը, ստեղծարար ու հոգածու գործունեությունը**՝ այդ ամենի ա) կարիքները, բ) գորունակային և իրագործյալ (պոտենցիալ ու ակտուալ) առավելությունները կամ ռեսուրսները: Այս երկու գիտակարգերի տեսա-գործնական կատարումի պարագայում ևս իմացահայատելի ու սահմանելի է միևնույնը՝ **մարդկային համատեղ կյանքում բարեկարգության հաստատման կարիքի հոգացությունը**: Արդ՝ սոցիոլոգիայի ու սոցիալական աշխատանքի առարկայի ու կատարումի՝ այդկերպ որպես նույնական իմացահայտումն ու սահմանումը հնարավորություն է ընձեռում առաջարկել այս երկու գիտակարգերի փոխլրացաբար միավորումն իրագործել ամբողջական «սոցիալական գիտության» մեկ կամարի ներքո: Առաջարկի մեկ այլ՝ առավել հեռանկարային տարբերակ է՝ այս երկու գիտակարգերի՝ «սոցիոլոգիայի» ու «սոցիալական աշխատանքի» միավորումն իրագործել ուղղակիորեն «սոցիոլոգիայի» ներսում՝ որպես «տեսական սոցիոլոգիայի» և «գործնական սոցիոլոգիայի» երկբաղադրյալ միություն, «սոցիալական աշխատանքը» վերըմբռնելով որպես հենց «գործնական սոցիոլոգիա»՝ կոչված մարդկային կյանքում բարեկարգության գործնական կատարումին, իսկ «կիրառական սոցիոլոգիան» ու իր կարգավիճակը ճշմարտելով որպես լոկ «տեսական սոցիոլոգիայի» էմպիրիկ մակարդակ²⁵: Ահավասիկ, սոցիոլոգիան իր նույնական առարկայով ու տեսա-գործնական կատարումի միասնականությամբ կարող է սահմանվել որպես «տեսական սոցիոլոգիայի» ու «գործնական սոցիոլոգիայի» (նույնն է թե՛ «սոցիալական աշխատանքի») երկմիասնորեն ամբողջական գիտություն²⁶:

Սոցիոլոգիայի սահմանում՝ ըստ առարկայի ու տեսա-գործնական կատարումի. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային համատեղ կյանքում բարեկարգության հաստատման կարիքի հոգացության դիտավորությամբ և ըստ այդմ՝ կերպարանումով ու կատարումով**²⁷:

Կամ՝ **սոցիոլոգիան տեսա-գործնական գիտություն է՝ կոչված մարդկային ինքնությունների համակեցության բարեկարգության անհրաժեշտ ու նախընտրելի իսկությունը հայտող իմաստի ու իմաստության խորհրդիմացությանն ու կատարումին:**

Ինչպես և ակնարկվեց, սոցիալական գիտության լիարժեք կատարումը ներկայանում է մարդկային կյանքի նկատմամբ իր երկբաղադրյալ ու մեկ-

25 Տե՛ս **Ջիջյան Ա., Քոչարյան Ռ.**, Պլատոնյան և արիստոտելյան ժառանգությունն ու հեռանկարային ներկայությունը սոցիոլոգիայում. տեսական եվ գործնական սոցիոլոգիա, գիտաժողովի նյութերի ժողովածու, ԵՊՀ հրատ. Եր., 2017, էջ 106-109:

26 Տե՛ս նույն տեղում:

27 Տե՛ս նույն տեղում, էջ 476. Տե՛ս նաև **Ջիջյան Ա., Քոչարյան Ռ.**, Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և քրիստոնեական կենսակերպի արմատավորումը, Եր., ԴԱԼԼ հրատարակչություն, 2009, էջ 186:

միասնական տեսա-գործնական ներգործուն ազդեցիկությամբ՝ առ բարեկարգություն: Առավել մանրակերտ բանաձևմամբ՝ սոցիալական գիտության կատարումն իր բուն նշանակետում ու ամենայն ձեռքբերումներում ներկայանում է որպես **մարդկային կյանքի էական իրողությունների իսկությունը հայտող հոգեկեցույց ու կենսարար իմաստին ու իմաստության խորհուրդին ներկրթյալ կատարելագործմամբ՝ մարդկային ինքնության, ընդհանուր կենսակարգի ու ազատականորեն ընտրությամբ անձնացյալ կենսակերպի ու մշակույթի, որոնցում և՛ հոգածու ու ստեղծարար գործունեության հոգևոր-քաղաքակրթական բարեկարգության խորհրդիմացություն ու կենագործում:**

Ըստ այդմ՝ կարելի է ընդհանրապես սոցիալական գիտությունը և կոնկրետորեն՝ սոցիոլոգիան սահմանել՝ ըստ առարկայի ու տեսա-գործնական կատարումի, հետևյալ մտքի բանաձևով. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության, կյանքի ու մշակույթի, ստեղծարար ու հոգածու գործունեության որպես այդպիսին գոյության և առ բարեկարգություն կատարելագործման իսկությունը բացորոշող ու կենագործող:**

Իսկ առավել մանրակերտ բացորոշմամբ՝ սոցիոլոգիայի բնությունը կարող է հայտորոշվել սահմանման այլ բանաձևով. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության, կյանքի ու մշակույթի՝ իրական կացության համեմատ՝ անհրաժեշտ ու նախընտրելի կատարելության և հոգեկեցույց ու կենսարար բարեկարգության իսկությունը հայտող իմաստն ու իմաստության խորհուրդը բացորոշող ու կենագործող:**

«Սոցիալական գիտության» բազում հանրահայտ փեսաբանների հետ մեկտեղ՝ սոցիոլոգիայի կայացմանն ու կապարելագործմանը միախորհուրդ հոգով և մտքով այն (սոցիոլոգիան)՝ ըստ իր ուսումնասիրության առարկայի է սահմանում նաև Պիտրիիմ Սորոկինը, ըստ էության, հիմնորոշ իր հասկացության վերահիմնադրմամբ՝ ըստ առարկայի ու փեսա-գործնական կապարումի միասնաբար վերասահմանելու հեռանկարային հնարավորություն ընձեռելով: Ըստ նրա, **սոցիոլոգիան գիտություն է՝ հասարակական երևույթների ընդհանուր, սեռային հատկություններն ու հիմնական օրինաչափություններն ուսումնասիրող**²⁸: Եվ նկատելի է, որ այսպես սահմանումով «սոցիոլոգիայի» բնությունը բացահայտվում է հարանման Ս. Ֆրանկի՝ «սոցիալական փիլիսոփայության» բնորոշման²⁹:

Սոցիալական գիտության և կոնկրետորեն՝ սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկան Պ. Սորոկինը **մարդկային համարովանդակ կյանքի** համընդգրկուն փիրոյթից առանձնացնում է մեկ այլ կերպով ու բաղադրակազմով, ի մի բերելով ու միահա-

28 Տե՛ս **Сорокин П.**, Общая социология, «Человек, Цивилизация, Общество», «Политиздат», М., 1992, էջ 31:
29 Տե՛ս **Франк С. Л.**, Духовные основы общества. Введение в социальную философию, Изд. «Республика», М., 1992, էջ 17, 18, 21, 31:

վաք բազմաբովանդակությամբ նշելով մարդկային «փոխազդեցություն» կամ «փոխներգործություն» հասկացությամբ: Արդևերայ նա **մարդկային համաբովանդակ կյանքի իրողություններում** որպես սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկա է որոշարկում **մարդկանց՝ միմյանց հետ փոխկապակցող ու որպես «հասարակություն» կայացնող էականը՝ մարդկային «փոխազդեցությունը» կամ «փոխներգործությունը»:** Արդարև, «փոխազդեցությունը» բնորոշ է բնաշխարհի ամենայն իրողություններին՝ անօրգանական և օրգանական՝ բուսական ու կենդանական, որ նույնպես նշում է Սորոկինը, այնինչ սոցիոլոգիայի առարկայի պարագայում հարկ է նկարի ունենալ մարդկային «փոխազդեցությունը», ինչն էլ հենց ուսումնասիրում է «homo-սոցիոլոգիան»³⁰: Եվ այս առումով, նկարի ունենալով բնաշխարհի բաղադրակազմում անօրգանականի, բուսականի ու զուր կենդանականի համեմատ՝ հենց **մարդկային բնության** առանձնահատկությունը, ասար՝ «փոխազդեցություն» հասկացության փոխարեն առավել ստույգ կլինի կիրառել «փոխներգործություն» հասկացությունը: Անշուշտ, Պ. Սորոկինը սոցիոլոգիայի առարկայում նկարի ունի ոչ միայն մարդկանց միջև «փոխազդեցությունը» և՛ կամ «փոխներգործությունը», այլև այդ առարկայում ներառում է մարդկային հոգե-մարմնավոր բնությանն ու գոյությանը ներհատկ մարդկային ներաշխարհի ու արտաքին կյանքի փոխազդու կամ փոխներգործուն ներկայակցվածությունը, ուստի և սոցիոլոգիան՝ ըստ առարկայի սահմանում է հայտորոշելով այդ առարկայում հոգեկանի ու սոցիալականի փոխազդու կապակցվածությամբ միասնականությունը:

Ըստ Պ. Սորոկինի, **«սոցիոլոգիան գիտություն է սոցիալ-հոգեբանական երևույթների սեռային հատկությունների ու հիմնական օրինաչափությունների վերաբերյալ»**³¹:

Իր մեկ այլ երկում Պ. Սորոկինը ձևակերպում է սոցիոլոգիայի նույնակերպ սահմանման մեկ այլ տարբերակ ևս. **«սոցիոլոգիան ուրույն գիտություն է, որն ուսումնասիրում է մարդկային փոխազդեցության (կամ փոխներգործության-Ռ.Բ.) երևույթների առավել ընդհանուր հատկությունները»**³²: Ընդ որում, այսկերպ սահմանմամբ բնորոշվող սոցիոլոգիայի ըմբռնումը նա նույնական է րեանում նաև սոցիոլոգների մեծամասնության՝ Մ. Մ. Կովալևսկու, Դե-Ռոբերտիի, Դե-Գրեֆի, Ուորդի, Մորսելլիի, Էլվոուրի, Ուորմսի, ու Նյուրկիսայի և այլոց համար³³:

Ըստ է նշել նաև, որ «փոխազդեցությունը» կամ «փոխներգործությունը» սոցիոլոգիայի նրա հայեցակարգում ամենին էլ նորաստեղծ հասկացություն չէր: Սոցիոլոգիայի բազում րեասրանների՝ Ե. Վ. Դե-Ռոբերտիի³⁴, Գ. Զինմելի³⁵, Լ. Գունպոլիչի³⁶, Է. Նյուրկիսայի³⁷ և այլոց, աշխատություններում այն արդեն կիրառվում էր «սոցիալական երևույթի» բնությունը բացորոշող սահմանումներում՝ պարասպիանելով այն հարցերին,

30 **Сорокин П.**, Общая социология, «Человек, Цивилизация, Общество», «Политиздат», М., 1992, էջ 28-29: տե՛ս նաև **Сорокин П.**, Система социологии, т. 1, Социальная аналитика, ч. 1, Петроград, Изд. Т-во «КОЛОС», 1920, էջ 2:

31 **Сорокин П.**, Общая социология, «Человек, Цивилизация, Общество», «Политиздат», М., 1992, էջ 31:

32 **Сорокин П.**, Система социологии, т. 1, Социальная аналитика, ч. 1, Петроград, Изд. Т-во «КОЛОС», 1920, с. 22.

33 Տե՛ս նույն տեղում, էջ 23:

34 Տե՛ս **Де-Роберти Е. В.**, Новая постановка вопросов социологии, СПб., 1909, էջ 46. հղումն ըստ **Сорокин П.**, Общая социология, «Человек, Цивилизация, Общество», «Политиздат», М., 1992, էջ 32:

35 Տե՛ս **Зиммель Г.**, Социологический этюд, СПб., 1901, էջ 31-39. հղումն ըստ նշվ. աշխ.:

36 Տե՛ս **Гумплович Л.**, Основы социологии, СПб., 1899, էջ 105-106, 113, 116 և այլն. հղումն ըստ նշվ. աշխ.:

37 Տե՛ս **Дюркгейм Э.**, О разделении общественного труда, Одесса, 1901, էջ 221. հղումն ըստ նշվ. աշխ.:

թե «ի՞նչ է» և «ինչպիսի՞նչ է սոցիալական երևույթը»³⁸: Քանզի հենց մարդկային «փոխներգործությանը» են բաղկանում սոցիալական երևույթները, և սոցիալական իրողության, երևույթի և-կամ գործընթացի համար հիմնարար ու հենց հիմնորոշ բաղադրարար-միավորը հենց մարդկային «փոխներգործությունն» է: Ահավասիկ, սոցիոլոգիայի՝ ըստ առարկայի իր սահմանման բանաձևում Պիպրիիմ Սորոկինն օգտագործում է մարդկային «փոխներգործություն» հասկացությունը՝ բացորոշելու համար հենց սոցիոլոգիայի ուսումնասիրության առարկայական փրոյոյթը, որպես այդպիսին հասկանալով մարդկային «փոխներգործության» հիման վրա կազմավորվող «սոցիալական երևույթները»:

Ըստ Պիպրիիմ Սորոկինի, «սոցիոլոգիան ուսումնասիրում է, մի կողմից, մարդկանց՝ միմյանց հետ փոխներգործության և, մյուս կողմից, այդ փոխներգործության գործընթացից առաջացող երևույթները»³⁹:

Եվ սոցիոլոգիայի իր հայեցակարգի համար հիմնորոշ «փոխներգործություն» հասկացությունը նա մեկնորոշում է հետևյալ կերպ.

«Մարդկանց փոխներգործության երևույթն առկա է այնժամ, երբ ա) հոգեկան ապրումները կամ բ) արտաքին ակտերը, կամ գ) մեկն ու մյուսը մի անձի (անձանց) գործատույթն է մյուսի կամ մյուսների գոյության ու վիճակի (հոգեկան և ֆիզիկական)»⁴⁰:

Մարդկային փոխներգործության այդկերպ բացորոշմամբ՝ Պ. Սորոկինը սոցիոլոգիան սահմանում է հետևյալ մտքի բանաձևով. **սոցիոլոգիան գիտություն է՝ ա) մարդկային վարքը՝ որպես այլոց վարքի ու գոյության գործատույթ, և բ) այդպիսի վարքից առաջացող երևույթներն ուսումնասիրող⁴¹:**

Կամ՝ **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային փոխներգործության ընթացքում մարդկանց վարքն ու դրա արդյունքներն ուսումնասիրող⁴²:**

«Մարդկային փոխներգործության» իրողությունն ու այն հայտանշող հասկացությունը արդյունավետ կարող է ներկայանալ սոցիոլոգիայի՝ ըստ առարկայի ու տեսա-գործնական կատարումի միասնաբար սահմանման համար: Այդ իրողության ու հասկացության անհրաժեշտ ներկայությունը մենք տեղարկում ենք «փոխգործունեություն» իրողության ու հասկացության բաղադրակազմում, որի բաղադրատարրերն ու ներկարգավոր միասնությունը բացորոշում ենք նորովի՝ որպես նախ՝ «փոխվերաբերմունք» և ապա՝ «փոխհարաբերություն», իսկ այնուհետ՝ «փոխգործողություն»: Արդարև, որևէ անձի, խմբի հասարակության՝ ինքնության, կյանքի ու մշակույթի նկատմամբ կարելի է ունենալ որոշակի «վերաբերմունք» և, սակայն, չունենալ դեռևս որևէ կերպ ու չափ «հարաբերություն» և-կամ ավելին՝ կատարել որևիցե «գործողություն»: Կարելի է նաև այդ ամենի կամ որևիցե բաղադրիչի նկատմամբ ունենալ որևէ կերպ ու չափ կայացած կամ նույնիսկ փոփոխված «վերաբերմունք» ու «հարա-

38 Այս մասին մանրամասն տես **Сорокин П.**, Общая социология, «Человек, Цивилизация, Общество», «Политиздат», М., 1992, էջ 32:

39 **Сорокин П.**, Система социологии, т. 1, Социальная аналитика, ч. 1, Петроград, Изд. Т-во «КОЛОС», 1920, с. 2.

40 Նույն տեղում, էջ 44:

41 Տես նույն տեղում, էջ 50:

42 Տես նույն տեղում:

բերություն» և, սակայն, առանց իրականացնելու սոցիալականորեն նշանակալի որևոր «գործողություն»: Եվ կարող է լինել նաև «մարդկային փոխգործունեության» այսլերպ եռակազմության՝ «փոխվերաբերմունքի», «փոխհարաբերության» ու «փոխգործողության» միասնական ու լիարժեք առկայություն, անշուշտ, այդ ամենի **փոխներգործունությանը** պայմանավորված՝ դրանցից յուրաքանչյուրի փոփոխության ժամանակընթաց դինամիկայով հանդերձ: Արդ՝ «սոցիալականի» բնությունը բացահայտող է. հյուրկհայմի և «սոցիոլոգիայի» բնությունը հայտորոշող Պ. Սորոկինի սահմանումների բանաձևերում ներկայող «փոխներգործություն» հասկացությունը ներառելով նորովի վերահասկացյալ ու մեկնորոշյալ «փոխգործունեության» համատեքստում, կարելի է կատարելագործել սոցիոլոգիայի սահմանումը: Եվ այդ կատարելագործումն անհրաժեշտ ու նախընտրելի է իրագործել՝ առաջնորդվելով իմաստության նպատակամետ սոցիալական գիտության կայացմանը հետամուտ խորհուրդով՝ «իմացության սոցիոլոգիայից» վերընթացնալով «իմաստության սոցիոլոգիայի»: Ահավասիկ, սոցիոլոգիայի, որի ներկատարելագործմամբ և՛ «իմաստության սոցիոլոգիայի», սահմանումը՝ ըստ առարկայի ու տեսագործական կատարումի կարելի է ամրագրել մտքի հետևյալ բանաձևերով. **սոցիոլոգիան գիտություն է՝ սոցիալականորեն ու հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի մարդկային փոխգործունեության, որոնցով և փոխներգործության՝ պատճառով հանդերձ, իսկությունը բացորոշող և անհրաժեշտ ու նախընտրելի, հոգեկեցույց ու կենսարար բարեկարգության աջակցությունն իրագործող:**

Հիրավի, իմաստության նպատակամետ սոցիալական գիտության կայացման, որ և աստ կոնկրետորեն կնշանակի՝ «իմացության սոցիոլոգիայից»՝ առ «իմաստության սոցիոլոգիա» վերընթացության, խորհուրդի առնչությամբ, ինչպես և առիթ է ընձեռվել մեր մեկ այլ հրապարակման մեջ ամրագրելու, սոցիոլոգիայի առարկայի անհրաժեշտ ու զարմանալիորեն նախընտրելի օրինակ է ներկայանում վերոբերյալ՝ **«հոգևոր-քաղաքակրթական»** միաբերող բնորոշմամբ համընդգրկվող տիրույթը, որ և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկից մեկնորոշելի է որպես՝ **մարդկային ու կոնկրետորեն նաև հայոց ինքնության ու կյանքի՝ հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի առավելություն կամ նվազություն ցուցանող կարգավորություն, իրադարձություններ ու գործեր**⁴³: Նրա պատմահայեցակարգի առնչությամբ այդ հասկացության գործածությունը և վերանվանումը իր երկի բուն ասելիքին համապատասխանությամբ որպես **«հոգևոր-քաղաքակրթական պատմագիտական հայեցակարգ»**՝ ձջնարտորեն արդարաբան և օրինավոր է, քանզի իր երկի ողջ շարադրանքում Հայոց Պատմահայրը բազմիցս՝ նախնյաց ու

43 Տե՛ս **Քոչարյան Ռ., Զիջյան Ա.**, Սոցիալական գիտության ըստ առարկայի սահմանումը, «Կէմ», N 3 (63), 2018, էջ 38:

նաև ներկայի բովանդակ կենցաղավարության բարեկարգության և-կամ անբարեկարգության գործերի վերաբերյալ իր դրվագապատումներում ու հենց «Ողբ»-ում, ընթերցող մտքին «յանդիման է կացուցանում» **հայոց բովանդակ կյանքը** բնորոշող **հոգևոր-քաղաքակրթական որպիսության** առանձնահատկությունները: Արդ՝ ուսանելով Մովսես Խորենացու հայեցակարգից՝ անհրաժեշտ ու նախընտրելի է մարդկային կյանքն ուսումնասիրող «սոցիալական գիտությունում» որպես առարկա ընտրել **հոգևոր-քաղաքակրթականորեն նշանակալի** և ուրեմն՝ մարդկային ներքին ու արտաքին կյանքն **իմաստնացնող**, առաքինուսույց և հենց բարեկարգող նշանակալիություն ունեցող իրողությունները: Ահավասիկ, «սոցիալական գիտության» ու կոնկրետորեն՝ «սոցիոլոգիայի» վերոբերյալ սահմանումներում «մշակութային նշանակալի»-ն վերաձևակերպելով՝ «հոգևոր-քաղաքակրթորեն նշանակալի» և Մովսես Խորենացուց ուսյալ՝ սոցիոլոգիայի առարկայի վերոբերյալ կատարելագործված բանաձևով «սոցիոլոգիայի» և-կամ «իմաստության սոցիոլոգիայի» սահմանումը կընդունի հետևյալ տեսքը. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային կյանքի հոգևոր-քաղաքակրթորեն բարեկարգության առավելությունը և-կամ նվազությունը՝ պատճառով ու հետևանքային ներգործուն նշանակալիությամբ հանդերձ ուսումնասիրող ու հարաճունորեն կատարելագործող:**

Կամ՝ **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային (որում և՛ ամենայն ազգերի ու ժողովուրդների, հասարակությունների ու կոնկրետորեն հայոց) ինքնության, կյանքի ու մշակույթի կարգավորության, իրադարձությունների ու գործերի՝ բարոյականորեն ու հենց առաքինորեն առավելության կամ նվազության որպիսությունն ուսումնասիրող ու հարաճունորեն կատարելագործող:**

Մովսես Խորենացուց ուսյալ՝ սոցիալական գիտությունն ու կոնկրետորեն՝ «իմաստության սոցիոլոգիան» կարելի է սահմանել մտքի առավել հակիրճ բանաձևով. **սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական բազմաբովանդակ կյանքի անկատարության ու կատարելության հնարավորությունների խորհրդիմացությամբ սատարագետ ներգործություն՝ առ բարեկարգություն կենագործող:**

Նույնորեն Հայոց Պատմահայր ս. Մովսես Խորենացուց ուսյալ՝ կարելի է ամրագրել սոցիալական գիտությունն ու կենկրետորեն՝ սոցիոլոգիան միասնաբար ու ամբողջական՝ ըստ առարկայի ու տեսագործական կատարումի սահմանող մտքի մեկ այլ բանաձև ևս. **սոցիոլոգիան գիտություն է՝ ամենայնի հետ մարդկության գոյակցության համաշխարհում՝ բուն մարդկային հոգևոր-քաղաքակրթական համագոյությունը, որում և՛ ստեղծարար, կրթական և հոգածու գործունեությամբ իսկ՝ մարդկային ինքնության,**

**կյանքի ու մշակույթի լինել(ի)ությանը հոգեկեցույց ու կենարար փոխ-
ներգործության հնարավորությունն ուսումնասիրող ու կենագործող:**

Ի մի բերելով վերոասացյալը՝ կարելի է առաջարկել սոցիոլոգիայի բնությունն ու գոյությունը, առարկան ու կատարումը բացահայտող, նույնն է թե՛ սոցիոլոգիան միասնաբար ըստ առարկայի ու կատարումի (տեսական ու գործնական) սահմանող, մեկ այլ բանաձև ևս: **Սոցիոլոգիան գիտություն է՝ մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության, կյանքի ու մշակույթի՝ ժամանակի մեջ լինելիության՝ առ իմաստություն և ամենայն առաքինություն ու բարեկարգության հոգևորությունը քննա-հասկացող ու մեկնորոշող՝ ամենքի համակեցության մերձավոր ու գոյակից ներկայում ու նաև հեռանկարային ապագայում ներկատարելագործմանն իր սատարագետ կոչումով և կատարումով**⁴⁴:

2. Սոցիալական գիտության մերձավոր ու հեռավոր կատարումը

Շարունակելով սոցիալական գիտության «կատարումի» վերաբերյալ քննա-խորհրդածությունը, կարելի է հասկանալ ու մեկնահայտել «կատարումի» երկբաղադրության ու մեկ-միասնականության մեկ այլ առանձնահատկություն ևս: **Սոցիալական գիտության կատարումը ներկայանում է երկբաղադրյալ ու մեկ-միասնական կազմությամբ՝ ոչ միայն որպես տեսագործնական, այլև որպես մերձավոր ու նաև հեռավոր կատարում:**

Ո՞րն է սոցիալական գիտության մերձավոր կատարումը: Սոցիալական գիտության **մերձավոր կատարումը այս աշխարհում մարդկային ինքնության, կյանքի (ընդհանուր կենսակարգի ու ազատականորեն ընտրյալ ու անձնացյալ կենսակերպի) կենցաղա- ու մշակութաստեղծ ամենայն գործունեության առաքինակարգ հոգևորությամբ ներկատարելագործվող կայացումն է՝ առ հոգևոր-քաղաքակրթական բարեկարգություն, ըստ մարդկային կարողության:**

Իսկ ո՞րն է սոցիալական գիտության հեռավոր կատարումը: Սոցիալական գիտության **հեռավոր կատարումը** նկատի ունի մարդկային ինքնության՝ առ Աստված հոգևոր կատարելագործումը և, ըստ էության, **մարդկային առաքինակարգ ինքնության ու կյանքի ներկատարելագործվող կայացումն է՝ ի կատարումն փրկաբանական ու Աստծո հետ միության խորհուրդի, ըստ մարդկային կարողության:**

⁴⁴ Սոցիոլոգիայի սահմանումներ՝ առանձին ըստ առարկայի և ըստ կատարումի, ապա նաև միասնաբար ըստ առարկայի ու կատարումի, մեկնությամբ հանդերձ, տես նաև **Ջիջյան Ա., Քոչարյան Ռ.**, Սոցիալական աշխատանքը, բարեգործությունը և քրիստոնեական կենսակերպի արձատավորումը, Եր., ԴԱԱԼ հրատարակչություն, 2009, էջ 190-206:

Ահավասիկ, սոցիալական գիտության բազմաբովանդակ ու մեկ-միասնական կատարումը ներկայանում է մարդկային ինքնության, կյանքի ու մշակութաստեղծ գործունեության առաքինակարգ հոգևորությամբ իսկ կայացող ու ներկատարելագործվող հոգևոր-քաղաքակրթական բարեկարգության **մերձակատարումի** և փրկաբանական ու Աստծո հետ հավետ միության **վերակատարումի** խոկման երկուստեք ուղղություններով: Հիրավի, ամենայն «**նախընտրելի սոցիալական գիտություն**» (աստ կոնկրետորեն՝ «նախընտրելի սոցիալական իմաստասիրությունը», «նախընտրելի սոցիոլոգիան») ու «նախընտրելի սոցիալական աշխատանքը կամ սատարագիտությունը») բացորոշելով մարդկային կյանքի էական իրողությունների իմաստները՝ ամենայն իմաստի «անժամանակային բնության սկզբունքային՝ «իրենք իրենցում նույնականության» հատկությամբ»⁴⁵ և, որ ամենաէականն է, կենսական իրողությունների որպես այդպիսին՝ անհրաժեշտ ու նախընտրելի կայացման գործությունն ու կարգը՝ պատճառով ու հետևանքով հանդերձ, մեկնորոշում են **հոգևոր իմաստները և հենց իմաստության խորհուրդները**՝ «յամենայն որ ինչ մարդկութեան պիտանի»⁴⁶ առաքինություններն ու բարեկարգությունները՝ աստվածայինը մարդկային իրողություններում, ուստի և իրենցում այդկերպ ինքնահասկացմամբ կայացող ու ներկատարելագործվող գիտակարգ(եր)ի գիտելիքում բովանդակյալ է ոչ թե «աշխարհի իմաստություն», այլ՝ հոգեկեցույց ու կենարար և փրկաբանական «աստվածային իմաստություն»՝ փրկության նպատակամետ բարենշանակ կյանքի իմաստություն⁴⁷:

Մարդկային ինքնությունն ու կյանքն իրենց բնությամբ հոգե-մարմնավոր են, և մշակույթը նույնորեն իմաստա-նյութեղեն, նույնն է թե՛ ոգե-նյութեղեն գոյացություն է: Եվ հոգե-մարմնավոր կամ ոգե-նյութեղեն այդ գոյավորների որպես այդպիսին գոյությունն ու ներկատարելագործումն այս կյանքում հնարավոր է դրանց գոյության պոտենցիաների բոլորատեսակ հնարավորությունների բազմությունում՝ միմիայն **հոգենպաստ ու հենց հոգեկեցույց** և դրա հետ մեկտեղ՝ **կենսանպաստ ու հենց կենարար** զորությամբ ու պայմաններով: Արդ՝ բացահայտելով մարդկային կենսական իրողությունների իսկությունը՝ զորությունն ու կարգավորությունը, մարդկային ինքնությանն ու կյանքին, մշակույթին ու մշակութաստեղծ գործունեությանը իրենց հոգեկեցույց ու կենարար իմաստով ու իմաստության խորհուրդով, սոցիալական գիտությունը **առ խորհրդիմացություն** իր այդկերպ վերընթացությամբ կայանում ու ներկատարելագործվում է որպես **իմաստության գի-**

45 **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Սովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 566, 567:

46 **Սովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, Եր., 1991, էջ 73, տ. 5:

47 Մտքի հիմնականում նույնական այս բանաձևը ունիվերսալ հումանիտար ու սոցիալական ամենայն գիտությունների համար, պատմության նկատմամբ իր կիրառությամբ տես **Քոչարյան Ռ.**, Պատմությունը և Հերմենևտիկան, Գիրք 1. Սովսես Խորենացու պատմագիտական հայեցակարգը, «Փրինթինֆո», Եր., 2016, էջ 567:

տություն: Ըստ այդմ՝ կարելի է ամրագրել սոցիալական գիտության սահմանում՝ ըստ առարկայի ու կատարումի (տեսական ու գործնական). **սոցիալական գիտությունը մարդկային ինքնության ու համակեցության, մշակույթի ու մշակութաստեղծ գործունեության որպես այդպիսին՝ անհրաժեշտ ու նախընտրելի եղելումի ու լինել(ի)ության իսկությունը, որում և՛ հոգեկեցույց կենարարության գործությունն ու կարգավորությունը, հայտող իմաստներն ու իմաստության խորհուրդները, ըստ մարդկային կարողության, հասկացող ու մեկնողաբար բացորոշող և ապա նաև կենագործող իմաստության գիտություն է:**

Վերոասացյալն ի մի բերելով և եզրակացնելով՝ հնարավորություն է ընձեռնվում հասկանալ ու ամրագրել, որ սոցիալական գիտության բուն կոչումը և ըստ այդմ՝ անհրաժեշտ ու նախընտրելի գոյության իսկությունը, իմաստն ու իմաստության խորհուրդն է՝ **ներկայանալ ու նաև ներկատարելագործվել մարդկային հոգևոր-քաղաքակրթական ինքնության, ընդհանուր կենսակերպի ու ազատականորեն ընտրությամբ անձնավորյալ կենսակերպի, մշակույթի ու հենց մշակութաստեղծ գործունեության հոգեկեցույց ու կենարար գործությունն ու կարգավորությունը տեսական քննա-հասկացմամբ մեկնորոշող ու նաև գործնականորեն կենագործող իմաստության գիտություն:**

Ռոմիկ Խ. Քոչարյան – հերմենևտիկայի տեսություն, պատմություն ու կիրառություն, տեսական և գործնական փիլիսոփայություն, պատմության փիլիսոփայություն, սոցիոլոգիայի պատմություն, տեսություն ու մեթոդաբանություն, աստվածաբանություն:

Էլեկտրոնային հասցե՝ kocharyan.romik@mail.ru

Անահիտ Ռ. Զիջյան – սոցիոլոգիայի պատմություն, տեսություն և մեթոդաբանություն, կոնֆլիկտի սոցիոլոգիա, սոցիալական աշխատանքի պատմություն, տեսություն և պրակտիկա:

Էլեկտրոնային հասցե՝ jijyan@mail.ru

Summary

THE DEFINITION OF SOCIAL SCIENCE BY THE THEORETICAL-PRACTICAL EXECUTION (FULFILLMENT)

Romik Kh. Kocharyan
Anahit R. Jjyan

Key words – social science, sociology, social work, socially significant, spiritually and civilizationally significant, truth, order, potency, wisdom.

The social science presents itself as language-acquired human life just in its essential accomplishment. And the social science is presented as **wisdom insightful and clarifying the genuine and own spiritual meaning of the past and present of human life, achievable to human understanding by God’s grace.** Studying human life and by full disclosing in it virtues of human selfness and their activities with praising value judgment, as well as vices - with reprehension and partial disclosure, social science as such is presented inter-woven with its **theoretical** forming, just as **active (practical) social science.** In the presented investigation, from the viewpoint of “revealing the truth-of-being of social science” both the theoretical and practical components are present in their interconnected union. Such understood theory and scientific conception of social science have as its own aim and final result - “the explication of the truth of being-of-social science as such. The nature of social science or the truth of being-of-social science as such, its essential features summarily is revealed in the short formulated definition of social science. The article analyzes and diversifies the views of the classics of sociological thought such as Emil Durkheim, Georg Simmel, Max Weber, De Roberti, Pitirim Sorokin and others in determining the subject of research and accomplishment (in Armenian “կատարում” - performance, execution) of social sciences. Along with many well-known theorists, the authors of the article analyzed in detail, in particular, the definitions of Pitirim Sorokin presented in his various works. According to the American sociologist of Russian origin and the author of the direction of “social and cultural dynamics”, the subject of social science research is the most general specific characteristics of socio-psychological phenomena, as well as the disclosure of the basic laws of human interaction. However, social science is engaged not only in revealing the truth of the actualized human being, which is often significantly descriptive, but also reveals the prime cause of these realities, their interconnectedness and cultural significance. In this article by revealing the essential

ՎԷԷ ՀԱՄԱՆԻԱԿԱԿԱՆ ԽԱՆՐԵԱ, ԺԲ (ԺԸ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 4 (72), ԽՈԿԱՐԵՄԵՆԻ-ՊԵՏԿԱՐԵՄԵՆԻ, 2020 ՓԲԼԻՍՈՓՍՅՈՒԹՅՈՒՆ

and preferable features of social science and summing up the results obtained, so by revealing the nature of social science or the truth of being-of-social science as such – in formulas of thought are presented the definitions of social science by its subject and accomplishment (performance), separately as well as jointly. **Social science and, in particular, sociology, is theoretical and practical wisdom that reveals the truth of the decline and rise of the virtues of human life, and therefore the possibilities of improving the human self, life and culture: study-lover and researcher, creator and career human life-activity to the spiritual-civilizational good-order. Thus, sociology is the science of theoretical and practical wisdom, revealing the truth of human life and the possibilities for improvement towards spiritual-civilizational good-order.**

Резюме

ОПРЕДЕЛЕНИЕ СОЦИАЛЬНОЙ НАУКИ ПО ТЕОРЕТИКО-ПРАКТИЧЕСКОМУ СВЕРШЕНИЮ

Ромик Х. Кочарян
Анаит Р. Джиджян

Ключевые слов - социальная наука, социология, социальная работа, социально значимое, духовно-цивилизационно значимое, истина, порядок, потенция, мудрость.

Социальная наука **предстает как в своем существенном свершении человеческая жизнь «в языковом обретении»**. В социальной науке **божьей благодатью** явлена **человеческому разумению достигаемая премудрость, прозревающая и проясняющая собственный и подлинный духовный смысл** минувшего и настоящего **человеческой жизни**. Исследуя человеческую жизнь и полноценно раскрывая в ней добродетели человеческой самости и ее деяний с последующим восхваляющим оценочным суждением, а также изучая пороки с умеренным раскрытием и порицанием, социальная наука, взаимосплетенно со своей **теоретической** составляющей, предстает и как деятельная (практическая) социальная наука. В представленном исследовании с точки зрения «раскрытия истины бытия социальной науки» в своем взаимосвязанном единстве присутствуют и теоретические, и практические составляющие. Теория и научная концепция социальной науки имеет своей це-

REFERENCES

1. **David Anhaght**, Sahmanq imastasirutean - Erksosutyunq imastasirutean, Yer., 1980, p. 29-104 (**In Armenian**).
2. **De-Roberti E. V.**, Novaya postanovka voprosov sociologii, Spb, 1909 (**In Russian**).
3. **Durkheim E.**, O razdelenii obschestvennogo truda, Odessa, 1901 (**In Russian**).
4. **Frank S. L.**, Duhovnie osnovi obschestva. Vvedenie v socialnyu filosofiyu, Izd. "Respublika", M.,1992 (**In Russian**).
5. **Gumplovich L.**, Osnovi sociologii, Spb., 1899 (**In Russian**).
6. **Jijyan A.**, Hogatsutyune vorpes universal intencia u himq sociologiayi ev socialakan ashxatanqi poxhaxordakcutyan, "Philisophayutune ardi ashxarhum", girq IV, Yer., 2014, 136-147 (**In Armenian**).
7. **Jijyan A. R., Kocharyan R. Kh.**, Ponimayuchaya metodologia socialnikh nauk M. Vebera, Philisophayutyune Hayastanum 21-rd dari shemin, Yer., 1998 (**In Russian**).
8. **Jijyan A., Kocharyan R.**, Socialakan ashxatanqe, baregorcutyune ev "qristoneakan kensakerpi armatavorume", Yer., 2009 (**In Armenian**).
9. **Jijyan A., Kocharyan R.** Socialakan gitutyun sahnunume est ararkai, "Vem", t.1 (63), Yer., 2018, p. 9-42 (**In Armenian**).
10. **Jijyan A., Kocharyan R.**, Platonyan ev aristotelyan jarangutjuny u herankarajin nerkajutjuny sociologiajum – tesakan ev gortsnakan sociologia, Gitajoxovi njuteri joxovacu, EPH hrat., Yer., 2017, p. 100-110 (**In Armenian**).
11. **Kocharyan R.**, "Bac hermenevtikai" xndrakargy ev V. Diltai hermenevtikai haecakargy – "Vem", t. 1 (49), Yer., 2015, p. 9-35 (**In Armenian**).
12. **Kocharyan R.**, "Imastutyun hermenevtikan" - amenayn gitutyun ev pilisopayutyun himnorosh u hamendhanur metodabanakan hayecakarg - Ardiakanutyun martahravernere. Pilisopayakan ev hogeabanakan himnakhndirnerere, mijazgayin gitajorov, EPH hrat., Yer., 2014, p. 18-21 (**In Armenian**).
13. **Kocharyan R.**, Krtutuan ev hermenevtika. Krtutjun ar imastutjun, Evroprint hrat., Yer., 2018 (**In Armenian**).
14. **Kocharyan R.**, Hans-Georg Gadameri philisophayakan hermenevtikan, Yer., 2006 (**In Armenian**).
15. **Kocharyan R.**, Patmutyune ev hermenevtikan, girq 1, Movses Khorenatsu patmagitakan hayecakarge, Yer., 2016 (**In Armenian**).
16. **Movses Khorenatsi**, Patmutiun hajoc, Yer., 1991 (**In Armenian**).
17. **Serebryakov F. F.**, Kak vozmojna socialnaya filosofiya? - Uchenie zapiski Kazanskogo gosudarstvennogo universiteta, t. 151, kn. 1, Gumanitarnie nauki, 2009, p. 76-83 (**In Russian**).
18. **Sorokin P.**, Obschaya sociologiya - Chelovek, Civilizaciya, Obschestvo, Politizdat, M., 1992 (**In Russian**).
19. **Sorokin P.**, Sistema sociologii, t. 1, Socialnaya analitika, ch. 1, Petrograd, Izd. "KOLOS", 1920 (**In Russian**).
20. **Weber M.**, O nekotorykh kategoryakh ponimayushey sociologii, "Izbrannie proizvedeniya", M, 1990, p. 495-546 (**In Russian**).
21. **Weber M.**, Obektivnost socialnogo poznaniya, "Izbrannie proizvedeniya", M, 1990, p. 345-415 (**In Russian**).
22. **Zimmel G.**, Sociologicheskii etyud, S-Pb., 1901 (**In Russian**).